

Յասմաուրք՝ մագաղաթեայ, բոլորգիր, գրեալ թուին ՌՃԻ:

Յասմաուրք՝ բոլորգիր:

Ճաշոց՝ բոլորգիր, գրեալ ի ՌՃԼԲ:

Յայսմաուրք՝ յեկեղեցին լուսա...

Աւետարան՝ բոլորգիր, մագաղաթ, գրեալ վասն Հեթում թագաւորին:

Օրինակ [ստացական]:

/5r/Յամի տնաւոց 1820, Մայիսի 22, ի քաղաքն Իլվով

Գերայծառ Բայետանոս Վարդերեսովիչ, ընտրեալ արքեպիսկոպոս Հայոց Իլով քաղաքի եւ իւր պատուելի գլերն ծանուցեալ, թէ ձեռագիրք հարկաւոր են ի վանս սրբոյն Ղազարու, որ ի Վենետիկ՝ վասն լուսաւորութեան ազգիս Հայոց եւ վասն պայծառութեան ուղղափառ սուրբ հաւատոյ մերոյ, ընծայեցին Մխիթարեան միաբանութեան, որ ի Վենետիկ, զգիրս Սարգիս վարդապետի այսու դաշամբ, զի նոյն Միաբա-

նութիւն պարտաւորեցի զգուշութեամբ պահել ի մաքուր գրատան իւրեանց, ի կարգս ձեռագրաց՝ անարատ եւ ապահով ի մշտնջենաւոր յիշատակի Իլվով քաղաքի եւ ամենայն գլերին Հայոց:

Նաեւ դիցի ի ճակատ նորուն յիշատակարան, թէ ուստի առաքեցան եւ որոյ ձեռամբ են:

Եւ ներքոգրեալ Մխիթարեան վարդապետ, հաւանեալ ընկալայ զայն գիրք առ ի առաքել ի վանս սրբոյ Ղազարու որ ի Վենետիկ ընդ ծով, յորոյ ի հաստատութիւն ետու զայս իմ ձեռագիր գերայծառ արքեպիսկոպոսին:

Հ. Մինաս Բժշկեան Կ. Մ.

/5v/Սակս ապահովութեան կամ նկատման ետու զայս իրս ձեռագիր եպիսկոպոսին վասն Սարգսի, իսկ վասն այլոց լուսի եւ մնացեան ի լուսութիւն, զորոց զկնի:

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇՉԵԻԻ՝ ՆԱԴԻՐ ՇԱՀԻՆ ՆՈՒԻՐՈՒԱՏ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Արտակ Սաղալեան

Ռուս պատմագիր Վասիլի Բրատիշչեւի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատութիւնը հրատարակուել է 1763 թ. Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի կողմից¹: Այդ աշխատութեան հայերէն թարգմանութիւնը, որը կատարել է Յարութիւն Դաւթեան Ջուղայեցին 1778 թ., պահուում է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում, 9648 թուահամարի տակ²: Այդ ձեռագիրը ԺԸ/դարի վերջին նրա կողմից կազմուած պատմական նիւթերի մեծարժէք ժողովածոյ է, որի բովանդակութիւնը հետեւեալն է.

ա) Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն (3ա-24ա)³,

բ) Յաղագս պատմութեանցն Պերսիոս երկրին սկսեալ Շահ Սուլթան Հուսէյնիցն մինչեւ Քէրիմ խան («Թարգմանեցեալ ի Յոլանդիզի կազէթից») (25ա-47ա),

գ) Վասիլի Բրատիշչեւ, Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ 1742, իսկ այժմ յամս 1778 թարգմանեցեալ ի բարբառս հայոց Յարութիւն Դաւթեանի Ջուղայեցւոյ (48ա-64ա),

դ) Դելորիեր, Առարկութիւն առ իւրոյ պապական սրբութեանն Պիոսի Վեցերորդի (65ա-78ա),

է) Կարգադրութիւն Ավստրիոս Յովսէփոյ կայսեր («Թիւն 1785, նոյեմբերի 27-էն Ավստրիոս համար 100 կազէթն տպեցեալ է») (78բ-79բ):

Նոյն թարգմանութեան մէկ այլ արտագրութիւն՝ կատարուած թիֆլիսեցի Ստեփան դի Մանդենովի կողմից 1803 թ., պահուում է Մատենադարանում, 10889 թուահամարի տակ⁴: Դատելով ձեռագրի յիշատակարաններից՝ վերջինս մատեանի ընդօրինակումը սկսել է 1803 թ. յունուարի 22-ին եւ աւարտին հասցրել նոյն թուականի փետրուարի 24-ին:

Վ. Բրատիշչեւի աշխատութեան հայերէն թարգմանութիւնը, որը Յարութիւն Դաւթեան Ջուղայեցին իրականացրել է ուսերէն հրատարակութիւնից ընդամէնը

1 Братищев В., Известие о происшедших между шахом Надиром и старшим его сыном Реза-Кулы-Мирзою печальных приключениях в Персии 1741 и 1742 гг., СПб., 1763.

2 Մատենադարանի ձեռագրացուցակում ձեռագիրը ներկայացուած է այսպէս. «ԺԸ դ. (1778-ից յետոյ): Թերթ՝ 79: Թուղթ: 33,5x21,1: Միասին: Նօտրգիր: Տող՝ 32-36: Կազմ՝ կաշեպատ ստուարաթուղթ: Յիշատակարան Գախազաղասար՝ 3ա (1723 թ.), 48ա (1763 թ.), 65ա (1782 թ.)»։ տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ, Երեւան, 1970, էջ 967:

3 Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն, «Կոունկ Հայոց աշխարհի», 1863, գրութիւն, «Կոունկ Հայոց աշխարհի», 1863, գրութիւն, էջ 81-112, թիւ Գ, էջ 181-212 (հրատարակումը կատարուած է այս ձեռագրից):

4 Մատենադարանի ձեռագրացուցակում ձեռագիրը ներկայացուած է այսպէս. «1803 թ.: Թիֆլիս: Գրիչ՝ Ստեփան դի Մանդենով: Թերթ՝ 26: Թուղթ: 21,8x17,3: Միասին: Նօտրգիր: Տող՝ 19-23: Պահպանակ՝ 2+2, սպիտակ թուղթ: Կազմ՝ մոմլաթապատ ստուարաթուղթ, աստաթ՝ թուղթ: Յիշատակարան՝ 1ա, 26ա»։ տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ, Երեւան, 2007, էջ 244:

տասնհինգ տարի անց, պայմանաւորուած էր Նազիր շահի (1736-1747) կեանքի եւ գործունէութեան նկատմամբ եղած մեծ հետաքրքրութեամբ: Պատահական չէ, որ ճիշտ նոյն ժամանակաշրջանում մէկ այլ Հայորդի Պողոս Միրզայեան Ամիրօղլու, հեռաւոր Կալիթայում ձեռնարկել եւ, «առանց ոչինչ վարձու, եւ ոչ ումեքէ ակնկալութեան», իրականացրել է անգլիացի ճանապարհորդ Ջոնս Հանուէի յայտնի աշխատութեան⁵ Նազիր շահին նուիրուած մասի հայերէն թարգմանութիւնը, որը 1780-1783 թթ. լոյս է տեսել Մազրասում՝ Յակոբ Շահամիրեանի տպարանում, ընդամէնը 200 օրինակ տպագրանակով⁶:

Սակայն, ի տարբերութիւն Հանուէի գրքի՝ Պողոս Միրզայեանի թարգմանութեան, Յարութիւն Դաւթեան Ջուղայեցու թարգմանութիւնը տակաւին մնացել էր անտիպ:

Մատենադարանում պահուած են Յարութիւն Դաւթեան Ջուղայեցու ընդօրինակած մի քանի ձեռագրեր, որոնց յիշատակարանների շնորհիւ հնարաւոր է դառնում լոյս սփռել նրա կենսագրութեան որոշ էջերի վրայ: Այսպէս, նա 1767 թ. Աստրախանում ընդօրինակել է Գրիգոր Կանպանեանի «Երգարանը», որի վերջում տեղ գտած յիշատակարանում կարդում ենք. «Օրինակեցաւ յամի Տեառն 1767 փետրուարի 9, ի նաւահանգիստն Աստրախան, ձեռամբ մեղապարտ Յարութիւն Դաւթեանէ»⁷:

Մէկ տարի անց՝ 1768 թ. դեկտեմբերին, նա Աստրախանում աւարտել է Միքայէլ Ասորու «Ժամանակաց զրոյցք» աշխատութեան ընդօրինակումը, որի ձեռագիրը գրանցուած է Մատենադարանում 3517 թուահամարի տակ: Այդ մատենի վերջում նրա թողած յիշատակարանում կարդում ենք. «Խնդրեմ Աստուածասէր Հարցդ եւ եղբարցդ, ո՛վ ոք Հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք առ յոյսն բնաւից Քրիստոս զնուաստ Յարութիւնս Ջուղայեցի, զհայրն իմ Դաւիթն եւ զմայրն իմ Սօլթանաղէն, որք Հանգուցեալք են ի Տէր: Եւ մանաւանդ զնորարողբոջ որդիքն մեր՝ զԴաւիթն եւ զՄարգարայն, որք ծառայք ձեր են ամենեցւոյն, թերեւս աղօթիւք ձերովք զարգասցին ուղիղ հաւատով, երկիւղիւ եւ աստուածապաշտութեամբ ի փառս անուան իւրոյ. ամէն... Եղեւ աւարտումն ի թուին ՌէձՅԸ (1768) դեկտեմբեր ի (20). ի Աստրախան քաղաքի»⁸: Այս յիշատակարաններից պարզ է դառնում, որ Յարութիւն Դաւթեան Ջուղայեցին 1760-ական թթ. վերջերին ապրել է Աստրախանում, որտեղ էլ, ամենայն հավանականութեամբ, սովորել է ռուսերէն:

Այնուհետեւ Յարութիւն Դաւթեանն ընդօրինակել է մի ժողովածոյ (Մատենադարան, ձեռ. թիւ 8003), որն ընդգրկում է Կեղծ Կալիթանէսին վերագրուող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ» աշխատութիւնը եւ Պետրոս Բերթումեանի «Աստուածանմանութիւն» երկը: Թէեւ սոյն ժողովածոն անթուակիր է, սակայն ակնյայտ է, որ ձեռագիրն ընդօրինակուած է 1769-ից յետոյ, քանի որ Պ. Բերթումեանն իր աշխատութեան շարադրումն աւարտել է այդ թուականին: Աղեքսանդրի վարքի վերջում Յ. Դաւթեանը թողել է մի համառօտ յիշատակարան, որը թէեւ կենսագրական որեւէ տեղեկութիւն չի պարունակում, սակայն խօսում է այս բազմարդիւն գրչի

8 Մատենադարան, ձեռ. թիւ 3517, էջ 224ա:

5 Jonas Hanway, *An historical account of the British trade over the Caspian sea*, Vol. I-II, London, 1754.
 6 Հանուէ, Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նաղըր շահ թագաւորիմ Պարսից, թարգմանեալ յանգլիացոց բարբառոյ ի հայ բարբառ ի Միրզայեան Պողոսէ Ամիրօղլու, Մաղրաս, 1780:
 7 Մատենադարան, ձեռ. թիւ 9840, էջ 36ա:

պատրաստուածութեան մասին. «Իսկ զայս Պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու, զոր գրեց իմով անարժան Յարութիւն Դաւթեանի ձեռամբս՝ սրբագրեալ, առնութեւր ունելով երկու օրինակս: Բայց ի տեղիս տեղիս բառ եւ բան անհամեմատք էին, որ եւ որչափն կարի մեր նուաստագոյն ուղղելով գրեցի եւ ոմանք բառք ու բանք, զորս վասն այլայլութեան գրողացն չհասկացայ, այնպէս գրեցեցի՝ ստուգապէս ընդ Համեմատ օրինակացն եւ ոչ աւելի կամ պակասակս օգտի ինձ նուաստիս եւ այլ Համեմակաց, որք կամին օգտիլ ի Աղեքսանդրէ»⁹: Յարութիւն Դաւթեան Ջուղայեցու ընդօրինակած ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը մեզ բերեց այն համոզման, նասիրութիւնը մեզ բերեց այն համոզման, որ գործ ունենք իր ժամանակի առաւել բանիմաց եւ գրագէտ անձնաւորութիւններից մէկի հետ: Թերեւս, Մեծն Աղեքսանդրի պատմութեան ընդօրինակումն է նրան յուշել «երկրորդ Աղեքսանդր» յորջորջուած Նազիր շահին նուիրուած Վ. Բրատիչչեւի աշխատութեան թարգմանութեան գաղափարը:

Հետագայում Յարութիւն Դաւթեան Ջուղայեցին եւս մէկ անգամ անդրադարձել է Աղեքսանդր Մակեդոնացու թեմային՝ ռուսերէնից հայերէն թարգմանելով I դարի հռոմէացի պատմիչ Քուրիստոս Կուրի Նուսիտի «Գիրք պատմութեանց Մետիոս Ռուփոսի» գիրք պատմութեանց Մետիոս Ռուփոսի «Գիրք պատմութեանց Մետիոս Ռուփոսի» աշխատութիւնը, որի ձեռագիրը եւս պահուած է Մատենադարանում, 2870 թուահամարի տակ: Այս ձեռագրի յիշատակարանը հաղորդում է նաեւ նրա ազգանունը. «Թարգմանեցեալ ի լաթինականէ ի ռուստաց լեզու: Հատոր առաջին: Իսկ այժմ արտահանեցեալ անտի ի բարբառս Հայոց Յարութիւնի Դաւթեան

9 Մատենադարան, ձեռ. թիւ 8003, էջ 176ա, Բրատ. տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, աշխ. Յ. Սիմոնեանի, Երեւան, 1989, էջ 47:

Դիլանեանց Ջուղայեցոյ»¹⁰: Ձեռագրում առկայ Մակեդոնացու նկարի շրջանակի ներքեւի մասում գրուած է. «Մեծն Աղէքսանդր Մակեդոնացի. ի Սանկթ Պետրբուրգ փորագրեալ: Ի 1793 յամի Տեառն. ՌՄԽԲ», հետեւաբար՝ երկի թարգմանութիւնը կատարուել է 1790-ական թթ. կէսերին:

Կուրտիոս Ռուփոսի եւ Վ. Բրատիչչեւի երկերի թարգմանութիւնից բացի՝ նա 1798 թ. Աստրախանում ռուսերէնից հայերէն է թարգմանել Ֆէոդոր Էմինի «Գիրք խոստովանական անուանեալ ճանապարհ փրկութեան» աշխատութիւնը, որը ձեռագիր վիճակով պահուած է Մատենադարանում, 7504 համարի տակ: Թարգմանութիւնը կատարուած է Յ. Էմինի գրքի առաջին հրատարակութիւնից¹¹ տասնութ տարի անց: Այս ձեռագրի յիշատակարանը հաղորդում է. «Այժմ թարգմանեալ Յարութիւն Դաւթեան Դելանեան Ջուղայեցոյ. յամի Տեառն 1798. ի Աստրախան»¹²:

Նա 1806 թ. Աստրախանում ընդօրինակել է Դիւլորիէի իր իսկ թարգմանած եւ թիւ 9648 ժողովածոյից մեզ նախածանօթ «Առարկութիւն առ պապն Պիոս» երկը, որի ձեռագիրը գրանցուած է Մատենադարանում 23 թուահամարի տակ: Այդ ձեռագրի յիշատակարանում կարդում ենք. «Այժմ թարգմանեալ ի բարբառս Հայոց նուաստ եւ ապիկար Յարութիւնէ Դաւթեան Ջուղայեցոյ Դելանեան, ի Աստրախան քաղաքի, 1806 ամի»¹³:

Այսպիսով, Մատենադարանի թիւ 3517 ձեռագրի յիշատակարանում առկայ գրչի որդու Դաւիթ անունը եւ նրա «Դելանեան» ազգանունը որեւէ կասկած չեն թողնում, որ Վ. Բրատիչչեւի աշխատութեան թարգմանիչ եւ բազմարդիւն գրիչ

10 Մատենադարան, ձեռ. թիւ 2870, էջ 1ա:
 11 Эмин Ф., *Путь ко спасению или разные набожные размышления*, СПб., 1780.
 12 Մատենադարան, ձեռ. թիւ 7504, էջ 1ա:
 13 Մատենադարան, ձեռ. թիւ 23, էջ 1ա:

Յարութիւն Դաւթեան Դելանեան Զուղայեցիին ոչ այլ ոք է, եթէ ոչ ուսուսական բանակի՝ գեներալ-մայոր, 1812 թ. Հայրենական պատերազմի Հերոս Դաւիթ Դելեանովի (Դելանեան, 1761-1830) հայրը: Վերջինիս կենսագրութիւնից երեւում է, որ նրա հայրը հետագայում Աստրախանից տեղափոխուել է Ս. Պետերբուրգ, որտեղ ստացել է ազնուականի կոչում¹⁴:

Արժանին պէտք է մատուցել Յարութիւն Դաւթեան Դելանեան Զուղայեցուն սոյն աշխատութեան բարձրարուեստ թարգմանութեան համար: Ռուսերէն բնագրի հետ նրա թարգմանութեան համեմատութիւնը ցոյց տուեց, որ այն կատարուած է ճշգրիտ եւ բարձր մակարդակով: Այն Հանուէի երկի՝ Նադիր շահին նուիրուած մասի հայերէն թարգմանութեան հետ մէկտեղ անվարան կարելի է դասել ժԸ դարի հայ թարգմանական գրականութեան լաւագոյն յուշարձանների շարքը:

Իրանի Նադիր շահի կենսագրութիւնը դեռեւս նրա կենդանութեան օրօք վիպական կերպարանք էր ստացել: Եւրոպական լեզուներով գրուած եւ հրատարակուած էին նրա համառօտ եւ ընդարձակ կենսագրականները, որոնցում ներկայացուած էր թուրքմէնական աֆշար ցեղից սերուած այս շարքային ռազմիկի սրբնթաց վերելքը դէպի Սեֆեանների գահը:

Այս թաղիքագործի որդին, որն իր ընտանիքի ապրուստը վաստակում էր վառելափայտի վաճառքով, իր հայրենի խորասանում գլխաւորել էր ապստամբութիւնը աֆղանական տիրապետութեան դէմ: 1726 թ. ծառայութեան էր անցել շահ Թահմասպ Բ-ի (1722-1732) մօտ, իսկ 1730-1731 թթ.

14 Нерсисян М., Отечественная война 1812 г. и народы Кавказа, Е., 1965, с. 222, Аветисян Г., Генералы-армяне в Российской империи, Е., 2007, с. 169.

յաղթել էր Իրանի մի շարք շրջանները գաւթած աֆղաններին ու թուրքերին: Այդ յաղթանակները մեծ ժողովրդականութիւն են բերում Նադիրին: «Շահ Թահմասպ II-ի պարտութիւնները թուրքական զօրքերից եւ նրա դէմ ծագած դժգոհութիւնները յարմար առիթ են ընձեռում Նադիր խանին նրան՝ գահընկէց անելու համար, որից յետոյ Նադիրը գահ է բարձրացնում Թահմասպի 8-ամսեայ որդուն՝ Աբբաս III-ին (1732-1736)՝ վերջինիս առնելով իր խնամակալութեան տակ: Սակայն, խնամակալի դերը եւս չի գոհացնում Նադիրին եւ նա ինքն է գահ բարձրանում 1736 թ. մարտի 8-ին»¹⁵: Այսպիսի կեանքի ճանապարհ անցած Նադիրը փնտրուած կերպար էր հերոսական պատմութիւնների սիրահար Եւրոպայի համար:

Նադիր շահի եւրոպական վարքագրութիւններում շատ յաճախ էին միախառնուած իրականն ու առասպելականը: Այդ կապակցութեամբ հայ նշանաւոր պատմաբան Լէօն նկատում է. «Եւրոպայում տեսակ-տեսակ պատմութիւններ էին շրջում Նադիրի ծագման մասին: Ոմանք ասում էին, թէ նա շուէյցարացի է, ոմանք՝ հոլանդացի, ոմանք՝ անգլիացի, ոմանք՝ ֆրանսիացի: Նոյնիսկ հաւատացնում էին, թէ նա ծնուել է Բրաբանտ նահանգում, ուր, իբր թէ, ապրում էր նրա քոյրը՝ իր երկու երեխաներով: Կար եւ մի պատմութիւն, որ հաւատացնում էր, թէ նա, ընդհակառակն, կովկասեան լեռնաբնակներից է եւ ծնուել է Դերբենդի մօտ: Միաժամանակ ասողներ էլ կային, թէ նա գտարիւն պարսիկ է, սերուած մի շատ հռչակուած տոհմից»¹⁶: Նադիրի անուան շուրջ հիւ-

15 Կոստիկեան Ք., Թահմասպ II-ի հայերից ուղղուած հրովարտակները եւ 1730-1731 թթ. Արաւշաւանքը դէպի Երեւան, «Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», XXIII, Երեւան, 2004, էջ 363:
16 Լէօ, Երկերի ժողովածոյ, հտ. Գ, գիրք 2, Երեւան, 1973, էջ 220:

սուող նմանատիպ պատմութիւնները դեռեւս այն ժամանակ գրիչ վերցնելու են մղում առաւել մօտիկից իրականութեանը քաջատեղեակ անձանց:

Հէնց այդպէս է բացատրում իր աշխատութեան ծնունդը Վասիլի Բրատիչեւը, որը 1736-1745 թթ. գտնուած էր Իրանում՝ սկզբում որպէս թարգմանիչ, իսկ հետագայում՝ որպէս Ռուսաստանի կառավարութեան ռեզիդենտ¹⁷: «Ես ինքնին գոյով անդ եւ լինելով ի բնիկ յերկիրն Պարսից, գրում է նա, եւ ունելով զբաւական յարմար եւ զդիպուկ ժամանակս իմանալ հաւաստի յաղագս կացութեանց եւ որպիսութեանց տեղոյն յայնորիկ, վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարեցի ինձ ծառայել հասարակութեան... քանզի ի բազմաժամանակեայ լինելութեան իմում ի յերկիրն Իրանայ, նաեւ առաւել գոյով իմ դրուսնսն արքունական Նադիր շահին աստիճանաւ Ռուստաց կայսերական դեսպանութեան, նաեւ ոչ սակաւ, այլ ըստ չափու եւ կարողութեան իմոյ գիտելոյս զլեզուս պարսից ունէի բարեգոյն եւ վայելուչ հնարս պատկանաւոր ձեռամբ զանազան հաւատարմաց սակս զստուգութեան այնպիսի անցիցն անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ եւ հաստատել ի նոսա, սութիւնսն ստանալ եւ հաստատել ի նոսա, նաեւ յաղագս բազմաց ակնատես ես իսկ լեալ»¹⁸: Այդ է պատճառը, որ չնայած փոքր ծաւալին Վ. Բրատիչեւի աշխատութիւնը առ այսօր չի կորցրել իր նշանակութիւնը եւ կարեւոր սկզբնաղբիւր է Նադիր շահի կեանքի ու գործունէութեան ուսումնասիրման համար:

17 Энциклопедический словарь, издатель Ф. Брокгауз, И. Ефрон, т. IV^а, СПб., 1891, с. 603, Тер-Мкртчян Л., Армения под властью Надиршаха, М., 1963, с. 13.
18 Մատենադարան, ձեռ. թիւ 9648, էջ 48բ-49ա (այսուհետեւ սոյն ձեռագրի էջերը լղելու ենք շարադրանքում):

Վ. Բրատիչեւի աշխատութիւնը սկսուած է 1738 թ. իրադարձութիւնների ներկայացմամբ, երբ Նադիր շահը շուրջ մէկ տարի տեւած պաշարումից յետոյ գրաւել էր Աֆղանստանի Ղանդահար քաղաքը եւ արշաւանքի դուրս եկել դէպի Հնդկաստան: Այդ ժամանակ, ապահովագրելով իրեն զանազան անախորժութիւններից, Նադիր շահը Իրանի փոխարքայ է նշանակում իր աւագ որդի Ռզա-Ղուլի Միրզային¹⁹: Վերջինս իր պաշտօնավարումը սկսում է Սեֆեան շահ Թահմասպ Բ-ի եւ նրա մանկահասակ որդիների դաժան սպանութեամբ:

Եւ մինչդեռ Նադիր շահը առաջնորդում էր իր բանակը դէպի քաղաքական ճգնաժամի մէջ գտնուող Հնդկաստան, Ռզա-Ղուլի Միրզան Իրանում քայլեր էր ձեռնարկում իր իշխանութիւնն ամրապնդելու համար:

Մողոլական Հնդկաստանի ամենագորտիրակալներ Աբբասի եւ Շահ Ջահանի անգոր յետնորդը՝ Մուհամմեդ շահը (1719-1748), ոչ միայն չկարողացաւ քիչ թէ շատ լուրջ դիմադրութիւն ցոյց տալ Նադիր շահի բանակին, այլեւ, ինչպէս գրում է պատմաբան Ղուլամ Հոսէյնը, «ճանապարհներն ու լեռնանցքները չէին պաշտպանուած, եւ ամէն ոք կարող էր [անարգել] անցնել դրանցով ցանկացած ուղղութեամբ՝ մնալով աննկատ: Տեղի ունեցող իրադարձութիւնների մասին ո՛չ մի հետախուզական տուեալ չէր հաղորդուած արքունիք, եւ ո՛չ փաղիշահը, ո՛չ էլ վէզիրը երբեք նոյնիսկ չէին հարցնում, թէ ինչու չեն ստացուած այդ տեղեկութիւնները»²⁰: Այս խորապատկերում ամենեւին էլ զարմանալի չէ, որ երբ Նադիր շահը 1739 թ. փետրուարի 24-ին տեղի ունեցած Կառնալի վճռորոշ ճակատամարտում գրոհի էր ա-

19 Мухаммад-Кавим, Поход Надир-шаха в Индию, М., 1961, с. 70.
20 Синха Н., Банерджи А., История Индии, М., 1954, с. 278.

ուսմանը հարմարեցնելով իր գիտություններին, Մուհամմեդ շահը գուարճանում էր հարեմում²¹:

Տրամաբանական է նաև այս իրադարձությունների վերջաբանը. Կառնալի ճակատամարտում հնդկական բանակը ջախջախելուց յետոյ՝ 1739 թ. մարտի 20-ին, Նադիր շահը յաղթականորեն մտնում է Դելի: Կողոպտում է Մեծ Մողոլների շուրջ 700 միլիոն ռուպի արժողութեամբ հարստութիւնը²², այդ թւում եւ Մողոլ շահերի հպարտութիւնը հանդիսացող «Կոհ-ի-նուր» («Լոյսի լեռ») յայտնի ադամանդը եւ «Սիրամարգի գահը»: Տիրանալով այդ երկրի անբաւ հարստութիւններին՝ Նադիր շահը 1151 հ. թ. զի հեջլէ ամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատում է պետական հարկերի զգալի մասից²³: Եւ մինչդեռ նա Մեծ Մողոլների անսահման հարստութեամբ բեռնաւորուած վերադառնում էր Իրան, Մուհամմեդ շահը օգնութեան խնդրանքով իր արնաքամ եղող պետութեան տարբեր նահանգներն էր յղում աղերսագրեր յիշեցնող հրամանագրեր²⁴:

Վ. Բրատիչչեւի երկում այս իրադարձութիւնները ներկայացուած են հպանցիկ, հիմնականում Իրանում տեղի ունեցող դէպքերի յետնախորքի վրայ, որտեղ մի խումբ դաւադիրներ՝ արքայազն Ռզա-Ղուլի Միրզայի գլխավորութեամբ, իշխանութիւնը խլելու նպատակով մահափորձ են կազմակերպում Նադիր շահի դէմ: Արքայազնից բացի դաւադրութեանը մասնակցում էին նաև նրա քեռին՝ սարդար

Լոթֆալի խանը, հազարապետ Մահմեդ բեկը եւ մի վարձու մարդասպան, որի անունը Վ. Բրատիչչեւը չի հաղորդում: Սակայն, 1741 թ. մայիսի սկզբին տեղի ունեցած մահափորձը ձախողում է. կրօնքին դրած ձեռքը փրկում է շահին անխուսափելի մահից: Այդ ընթացքում շահը հասցնում է տեսնել իր վրայ կրակողի դէմքը: Նրա հրամանով պատկերահանները նկարում են վարձու մարդասպանի դիմանկարը, որը տարածւում է երկրով մէկ: Հէնց այդ պահից էլ երկում սկսում է իրադարձութիւնների սրընթաց զարգացումը:

Այստեղ հեղինակը վարպետորէն ներկայացնում է շահական արքունիքի՝ խարդաւանքներով լի բարքերը: Պալատականներից ոմանք, օգտագործելով պատեհ առիթը, շահի առջեւ ամբաստանում են միմեանց՝ փորձելով նրա ձեռքով վրէժ լուծել իրենց հակառակորդներից: Սակայն, Նադիր շահը «հասու եղեալ ստութեանց մատնացնի՝ արձակեաց զնոսա թարց պատժոց, ոչ եւս ընդունելով զայնպիսի զրպարտութիւնք» (57բ):

Այդ դէպքից յետոյ լեզգիների կողմից 1738 թ. սպանուած եղբոր՝ Իբրահիմ խանի վրէժը լուծելու նպատակով 1741 թ. Նադիր շահը 35 հազարանոց բանակով արշաւում է Դաղստան, որտեղ կրում է իր կեանքի ամենածանր պարտութիւնը²⁵: «Աստանօր տիրապետ եւ յաղթողն հզօր Նատիրն այնքան խոնարհեցաւ, զրում է Հանուէն, մինչ զի քսան հազար խորտակեալ զօրօք միայն մնաց»²⁶:

Հէնց այդ ծանր պարտութիւնից յետոյ էլ Նադիրի մօտ են բերում Բուխարայում բռնուած վարձու մարդասպանին, որը շահի հրամանով կուրացուելուց յետոյ նրան պատմում է ողջ ճշմարտութիւնը դաւա-

21 Кишмишев С., Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889, с. 195, 198.
22 Синха Н., Банерджи А., указ. соч., с. 279.
23 Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 87-93.
24 Паниккар К., Очерк истории Индии, М., 1961, с. 258.

25 Մանրամասն տե՛ս Մագոմեդով Ք., Разгром войск персидского завоевателя Надир-шаха в горах Дагестана, Махачкала, 1940.
26 Հանուէ, նշ. աշխ., էջ 147:

դիրների մտադրութեան մասին: Շահը շուրջ վեց ամիս լռութիւն պահպանելուց յետոյ 1742 թ. ամռանը հրամայում է զօրքի առջեւ խեղդամահ անել հազարապետ Մահմեդ բեկին: Վերջինիս՝ իրեն գթալու խնդրանքին Նադիրը պատասխանում է.

«Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին եւս խնայիցէաք» (60ա):

Այնուհետեւ շահը Դերբենդի մօտ գտնուող իր բանակատեղին է կանչում արքայազն Ռզա-Ղուլի Միրզային: Այնտեղ էլ 1742 թ. հոկտեմբերի վերջին Նադիր շահի հրամանով Ռզա-Ղուլի Միրզան կուրացուում է²⁷: Այս փաստի յիշատակումով էլ Վ. Բրատիչչեւի աշխատութիւնն աւարտւում է:

Այս իրադարձութիւնը, որն ընկած էր Վ. Բրատիչչեւի երկի հիմքում, ճակատագրական նշանակութիւն ունեցաւ ո՛չ միայն կուրացուողի, այլեւ կուրացնողի համար: Այդ դէպքից յետոյ Նադիր շահի աստղը միանգամից խամրեց: Փաստօրէն, Վ. Բրատիչչեւի աշխատութիւնը Նադիր շահի անձնական ողբերգութեան պատմութիւնն է. անձնական ողբերգութիւն, որը վերածեց պետական դժբախտութեան:

Այդուհետեւ Նադիր շահի մղած պատերազմները, լաւագոյն դէպքում, աւարտւում էին անարդիւնք: Իրանը թուրքաֆղանական ռազմակալումից ազատագրած ժողովրդական հերոսը վերածուել էր նենգ ու կասկածամիտ մի բռնակալի, որն իր մօտից «գրեթէ երբէք անվնաս ոչ թողոյր զոք զնալ»²⁸: Մանր հարկապահանջութիւնը, որը յատկապէս սաստկացել էր Նադիր շահի կառավարման վերջին տարիներին, լիակատար քայքայման էր հասցրել

27 Տե՛ս նաև Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, с. 217-218.
28 Չամչեանց Մ., Հայոց պատմութիւն, հտ. Գ, Երևան, 1984, էջ 815:

երկրի տնտեսութիւնը: Ժողովրդական ապստամբութիւնները ցնցում էին Նադիր շահի պետութեան խարխուած հիմքերը²⁹: Այսպիսի վիճակում էր յայտնուել Իրանը, երբ 1747 թ. յունիսի 20-ին Նադիր շահը դաւադրաբար սպանուեց Խորասանի մօտ գտնուող ռազմաճամբարի իր վրանում, իր թիկնազօրի պետ Սալեհ բեկի ձեռքով:

Նադիր շահի սպանութիւնից յետոյ գահ բարձրացաւ նրա եղբորորդին՝ Ադիլ շահը (1747-1748), «արդարադատ» յորջորջուած անարդար մի կառավարիչ, որի միակ յիշարժան գործը եղաւ Նադիրի ընտանիքի ոչնչացումը: Հօր կողմից կուրացուած Ռզա-Ղուլի Միրզան Նադիրի մահից շատ չանցած իր 13 որդիների հետ Քելթում սպանուեց հօրեղբորորդու կողմից: Նոյն ճակատագրին արժանացաւ նաև Նադիրի միւս որդին՝ Նասիրուլլահ Միրզան, որը սպանուեց Մեշհեդում: Շուտով եղբոր՝ Իբրահիմ խանի կողմից սպանուեց նաև Ադիլ շահը: Այսպիսով, Նադիր շահի ստեղծած լայնածաւալ պետութիւնը արագօրէն մասնատուեց, իսկ Իրանը սուղուեց գահակալական պայքարի յորձանուտը:

Աւելի քան երկուս ու կէս դար է անցել Նադիր շահի իշխանութեան տարիններից. այդ ընթացքում նրա մասին գրուել են բազմաթիւ աշխատութիւններ, սակայն Նադիրին նուիրուած մեծաքանակ գրականութեան առկայութեան պայմաններում էլ Վ. Բրատիչչեւի փոքրածաւալ երկը մնում է լաւագոյններից մէկը «երկրորդ Ալեքսանդր» յորջորջուած Նադիր շահի բարդ ու հակասական կերպարի ներկայացման տեսանկիւնից:

29 Ашрафян К., Антифеодальные движения в империи Надир-шаха (1736-1747), "Ученые записки Института востоковедения", М., 1953, т. VIII, с. 166-204.

Հրապարակելով Վասիլի Բրատիչչեւի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատութեան հայերէն թարգմանութիւնը՝ փակագծերով նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք յապաւումները, իսկ բաց թողնուած տառերը լրացրել ուղղանկիւն փակագծերի մէջ, ինչպէս նաեւ անտեսել ենք «ի» նախդիրից առաջ դրուած ապաթարցները եւ կէտադրութիւնը սրբագրել ըստ արդի հայերէնի կանոններին: Անտեսել ենք նաեւ թարգմանչի կողմից երբեմն բառամիջում անհարկի օգտագործուող «ը» տառը:

ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՉՉԵՒ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՄԷՋ ԹԱՀ ՆԱԴԻՐԱՅ ԵՒ ԱՒԱԳ ՈՐԴԻՈՑ ՆՈՐԻՆ ՌԶԱ-ՂՈՒԼԻ ՄԻՐԶԻՆ ՏՐՏՄԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՑ Ի ՅԵՐԿԻՐԻՆ ՊԱՐՍԻՑ ԾԱՄՍ 1741 ԵՒ 1742 Յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս Բայոց
 ... ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱԻԹԵՆԻԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՑ

(48բ) ԱՌ ԸՆԹԵՐՑԱՍԷՐՍ

Բազումք ի յայլասեռ հեղինակաց տքնին, զի ի զանազան լեզուս ի լոյս ածիցեն զճառս պատմաբանականս յաղագս գործոց եւ անցիցն անցելոց արքային պարսից Նադիր շահի, սակայն որովհետեւ այնքան հեռաւորագոյն բացակացութեան գոլով կողմունսն Պարսկաստանայ, եւ շուրջ ամենայնի աշխատանօք շարագրօղքն զայնս հարկադրեն եւ աշխատ առնեն զինքեանս սակս արժանաւոր յիշատակի ճառեցմանէն հռչակաւոր առնս այսորիկ, բայց ես ինքնին գոլով անդ եւ լինելով ի բնիկ յերկիրն Պարսից եւ ունելով զբաւական յարմար եւ զգիպով ժամանակս իմանալ հաւաստի յաղագս կացութեանց եւ որպիսութեանցն տեղոյն յայնորիկ, վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարեցի ինձ ծառայել հասարակութեան:

Զփոխելով թարգմանութեան ուղղագրութիւնը՝ տառասխալները նշել ենք սովորականից տարբերուող տառատեսակով: Որոշ դէպքերու, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաեւ թարգմանչի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերութիւնները տրոհելով աւելի մանր հատուածների:

Յուսով ենք՝ Վ. Բրատիչչեւի աշխատութեան հայերէն թարգմանութեան հրատարակումը կը նպաստի Իրանի մեծագոյն տիրակալներից մէկի կեանքի եւ գործունէութեան ուսումնասիրմանը Հայաստանում:

Արդ, նախայայտ արարից այժմ, զի սոյն ստիացի այրս քաջայաղթ ի յառաջներորդ կիսոյ յայսմ դարու սկսաւ ցուցանել զփառս եւ զհռչակաւորութիւնս իւր այնքան եւ այնպէս, մինչ զի ընդ ժամանակս ժամանակս ամենայն հնարիւք, այսինքն՝ ի միում կողմանէ յաղթագոր բռնութեամբ, հետայոյզ պարփակմամբ եւ շուտափոյթ շարժողութեամբ, եւ ի միւսում կողմանէ քաղաքավար եւ քաջահնար գործովք եւ արիարար հետեւողութեամբ վերականգնեաց զհայրենին իւր եւ նստաւ յաթոռ իշխանութեան, զաղուանս նուաճեաց, յաղթեաց նաեւ զթագաւորն հնդկաց, որպէս առաջիկայ գրեցելոցս համառօտաբար ցուցանի: Իսկ ես յառաջին նուագիս նախաժաման եղէ, զի կարացից յաղագս լայնատարած եւ ընդարձակ պատմութեանցն նորա միայն զգողբալի գործսն նորա, զորս ինչ առ որդին իւր անցիցն լիագոյն ասացուածովք եւ առ նոյնն պատկանեցեալ որպիսութեամբքն

առ ի բաւականութիւն ընթերցասիրացոյ յայտնի առնել, քանզի ի բազմաժամանակեայ լինելութեան իմում ի յերկիրն Իրանայ, նաեւ առաւել գոլով իմ դրունսն արքունական Նադիր շահին աստիճանաւ Ռուստաց կայսերական դեսպանութեան: նաեւ ոչ սակաւ, այլ ըստ շափու եւ կարողութեան իմոյ գիտելոյս զլեզուս պարսից ունէի բարեգոյն եւ վայելուչ հնարս (49ա) պատկանաւոր ձեռամբ զանազան հաւատարմաց սակս զստուգութեան այնպիսի անցիցն անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ եւ հաստատել ի նոսա, նաեւ յաղագս բազմաց ականատես ես իսկ լեալ:

Եւ ի աւարտիլ բանիցս մնամ առ քեզ, ո՛վ բարեմիտ ընթերցող՝ հանդերձ պատուով իմով
 Վասիլի Բրատիչչօվ

(50ա) Յորժամ շահ Նադիր արշաւասոյր յաղթութեամբ էառ զանուանի քաղաքն աղուանից զՂանդահար³⁰, եղ ի մտի իւրում եւ ձգեաց զդիտաւորութիւն իւր առ ի գնալ զինու զօրութեամբ ի հնդիկս եւ յաղթել զնա, որ եւ ընդ առաջին պատահման թարց ամենայն աշխատանաց էառ եւ տիրապետեաց զքաղաքն Ջիլաբաթ³¹ ի սահմանս Հնդկաց:

Բայց ապա մտածեալ նորա սակս այնպիսի երեւելի գործառնութեանց եւ պատահմանցն որպիսութեանց ընդ կողմունս օտարս եւ հեռաւորագոյն՝ յառաջագրեաց ի դատողութեան իւրում լինիլ յաջողութիւն, նաեւ զճախորդութիւն, եւ զսկսեալ արշաւումն ի վերայ օտար յերկրի ոչ կամեցաւ ի բաց դնել, ենթադատեաց բարեպետս լինիլ զերէց որդին իւր զՌզալ-Ղուլի Միրզա, առ որ յատկապէս ծնողական վառեալ

գովթս սիրոյ ունէր, օգտակարս գոլ համարեաց յանձնել ի ցեղս իւր զժառանգութիւն թագաւորութեանն երկրին Իրանայ, սակս կասկածանաց իւրոց յայսմիկ արշաւմանէ վնասուց, վասնզի յայնմ ժամանակի շահ Թա[հ]մազ ընդ դեռահասակ որդովքն իւրովք³² ենթ ակնարկութեան պահապանաց տակաւին կենդանի էր՝ կարգադրելով հաստատեաց զորդին իւր զՌզա-Ղուլի Միրզա ի տեղի իւր փոխանորդ եւ տեղակալ թագաւորութեանն Պարսից³³, տալով նմա լիապէս բարձրագոյն իշխանութիւն կառաւարութեան, ի բաց հանելով միանգամայն ի ժառանգութեանն զհարազատ եղբայր իւր զԻբրահիմ խան³⁴: Եւ յաղագս այսպիսիք գործառնութեանց ինքն թաքուցանէր զանհանգստութիւն մտաց իւրոց՝ սակս հեռանալոյն իւրոյ ի պարսից եւ բացակացութեան: Եւ որպէսզի յայսմ պատահման դատաստանք եւ իրաւունք՝ արժանաւորաց պարգեւ եւ ամբարշտաց պատիժս, բաւականութիւնն զրկեցելոց եւ զայլ բարեգոյն կառավարութիւնքն ըստ կարգին եւ ըստ կանոնաց ի թագաւորութեանն լինիլ կարասցէին՝ հրատարակեաց եւ ծանոյց բոլոր երկրին հրովարտակօք: Եւ ընդ յանձնելոյն զիշխանութիւնն Պարսից (50բ) հօրէն առ զորդին թարց երկբա-

30 Նադիր շահի բանակը Ղանդահարը գրաւել է 1738 թ. մարտի 16-ին, մէկ տարի տեսած պաշարումից յետոյ: Նադիրն ինքը քաղաք է մտել մարտի 17-ին (տե՛ս Կիսմիշեւ Ս., *Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и собьития в Персии после его смерти*, с. 144-145):
 31 Պարսից բանակը Ջալալաբադ է մտել 1738 թ. հոկտեմբերին՝ առանց որեւէ դիմադրութեան հանդիպելու (տե՛ս Կիսմիշեւ Ս., *указ. соч.*, с. 164):

32 Նադիրի կողմից գահընկէց արուած շահ Թահմասպ II-ը իր դեռահասակ որդիների՝ Աքբաս III-ի եւ Իսմայիլի հետ քշարուել ու պահուում էր Սաքահվար քաղաքում (տե՛ս Քիչուք Արութիւն, *Պատմութիւն Թահմասպ Ղուլու*, «Մատենադարանի գիտ. միութեան ժողովածոյ», 1941, թիւ 1, էջ 124):
 33 Նադիր շահն իր որդի Ռզա-Ղուլի Միրզային Իրանի փոխարքայ է նշանակել 1738 թ. նոյեմբերի 7-ին (տե՛ս *The Cambridge History of Iran*, vol. 7. From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge University Press, Cambridge, 1991, p. 39):
 34 Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը Ատրպատականի փոխարքայ էր, որը մտնում էր Թաւրիզ քաղաքում (տե՛ս Փափագեան Հ., *Հայ-իրանական զինակցութիւնը 1726-1736 թթ. եւ Արեւելեան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրօք*, «Բանբեր Երեսմանի համալսարանի», 1972, թիւ 2, էջ 81):

յուրեան տուեալ է նմա նաեւ ծածուկ եւ յայտնի գոմանս պատուէրս լեզուաւ³⁵:

Եւ այսպէս, ի յերկրորդ կիսոյ 1739 յամին երկարեաց շահ Նադիր զճանապարհորդութիւնն իւր հեռաւոր ի կողմանս Հնդկաց³⁶, եւ Ռզա-Ղուլի Միրզա եկն ի թոռանիստ քաղաքն Խորասանու գաւառին ի Մաշադ եւ եմուտ անդ եւ կալաւ զկառարութիւնսն թագաւորական: Նախ եւ յառաջ ունեաց նա յոյժ հետեւողութիւն եւ փոյթ սակս անթերի ժողովման զզանազան հարկսն թագաւորական, եւ սկսաւ յաւելուլ զնոսին զանազան պատճառանօք, եւ այնպէս մուտն եղեւ բազմաթիւ յոյժ ներկայ դրամոց, յայնժամ յաւել եւս նա արս պատերազմական ըստ մեծի մասին ձիաւորս՝ լիացուցանելով զնոսա առատապէս ամենայն իրօք հարկաւորօք, նաեւ յենեալ եւ ապաւինեալ զապահով կացութիւն իւր, քանզի տեսանէր յիշխանութեան իւրում, զի ի միում կողմանէ ամենայն աստիճանաւորք թագաւորութեան եւ բոլոր ժողովուրդք լուծեամբ ի հնազանդութիւն ինքեան կան, եւ ի միւսում կողմանէ անգաղար եւ խորին մտածմամբ խոր[հ]էր իբր երկբայելի լինիլ գոլ զվիճակ հօր իւրոյ զսկսումն պատերազմին ընդ հնդկաց Մօղոլին³⁷, վասն որոյ կամե-

ցաւ ի գործ ածել զհնարս առ ի անկասկած լինելոյ զիշխանութիւն թագաւորութեան իւրոյ:

Արդ, զկեանք լինելութեան շահ Թա[հ]մազին, որ իբր յառաջ եկեալ իցէ ի հնագոյն ցեղէն Սօֆիականէ³⁸, ընդ որդւոյքն իւրովք երեւէր ի յաշտ նորա խոշորակն եւ ընդ[դ]իմական նպատակ. այնքան եւ մինչեւ ցայն վայր ոչ հանգեաւ սիրտ նորա, մինչեւ ըստ հրովարտակի իւրոյ զապարախտ շահ Թա[հ]մազ ընդ որդովքն եւ ընդ յղի կանամբքն առաջի կիսոյ 1740 յամին ի քաղաքոջն Սաւզիվար տմարդապէս եւ գազանաբար ոչ ետ սպանանել զնոսա³⁹: Եւ իսկոյն տարածեցաւ զլուր յայսմ սպանութեանց ընդ ամենայն Պարսկաստան եւ ոչ եղեւ այլ ինչ, եթէ ոչ զգալի աւաղումն աշխարհումն եւ ի խորոց սրտէ հառաչումն, եւ եղեն ամենեքեան ի խորին լուծեան, քանզի (51ա) բռնութեամբ տիրապետութիւնն շահ Նադիրայ եւ իշխանութիւն կառավարութեան որդւոյ նորին այնքան վիրավորեալ էր զսիրտս պարսից, զի գրեթէ խելացնորք էին լեալ եւ

ճակ: Նադիր շահի արշաւանքի ժամանակ Հնդկաստանի տիրակալն էր Մուհամմեդ շահը: XVIII դ. կէսին տիրել են միայն Դելիին եւ Արաշտակալքին: Ձեռակալութեան համարուել են Հնդկաստանի կառավարիչներ մինչեւ 1858-ը, երբ անգլիական գաղութային իշխանութիւնները վերացրին դինաստիան (Արանց մասին մանրամասն տե՛ս Տինխա Ն., Բաներձի Ա., *указ. соч.*, с. 275-277, Паниккар К., *указ. соч.*, с. 227-243, Антонова К., Бонгард-Левин Г., Котовский Г., *История Индии*, М., 1979, с. 211-250, Ասիայի եւ Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1973, էջ 496-517):

38 Նկատի ունի Իրանում 1502-1736 թթ. իշխած Սեֆեան արքայատոհմը, որն իր ամուսնուը ստացել է շիա մահմեդականների Սեֆեւիյէ աղանդի առաջնորդ շէյխ Սեֆի էդ Դիմի անունից: Սեֆեան թագաւորական տոհմի հիմնադիրն էր շէյխ Սեֆիի սերնդից Իսմայիլ I-ը, որն իշխել է 1502-1524 թթ. (տե՛ս Լէօ, *Երկերի ժողովածոյ*, հտ. Գ, գիրք 1, Երևան, 1969, էջ 43-45):

39 Ծախ Թախմասայի սպանութեան մասին տե՛ս Քիչուր Արուսի, *Աշխատք*, Եջ. աշխ., էջ 127:

35 Ըստ Քիչուր Արուսիի՝ այդ «պատուէրների» թում էր եւ շահ Թախմասայ II-ի ու Արա ընտանիքի ոչնչացումը (տե՛ս Քիչուր Արուսի, *Պատմություն Թախմասայ Ղուլու*, էջ 127):

36 Նադիր շահն իր արշաւանքը դէպի Հնդկաստան սկսել է 1738 թ. մայիսի 21-ին (տե՛ս Мухаммад-Кавим, *Поход Надир-шаха ...*, с. 8):

37 Մեծ Մողղներ. Հնդկաստանի տիրակալների դինաստիա 1526-1858 թթ.: Օգտուելով Հիւսիսային Հնդկաստանի անկայուն վիճակից՝ Բարսուի կառավարիչ Բարսուրը ներխուժել է այնտեղ եւ 1526 թ. հիմնել Մեծ Մողղների պետությունը: Մողղներ անուանումն առաջացել է Հիւսիսային Հնդկաստանի եւ Միջին Ասիայի մահմեդականների հնդիկների տուած *մուղալ* անունից: Մեծ Մողղներ անուանել են XVII դ. երրորդ քաղաքացիական պատերազմի ժամանակ: Մեծ Մողղների պետությունն իր մէջ ընդգրկել է ամբողջ Հնդկաստանը (բացի ծայր հարաւից), այժմեան Աֆղանստանի տարածքի արեւելեան մասը եւ Փենջաբը: Հզորութեան գագաթնակէտին է հասել Ծախ Քախանի (1627-1658) ժամա-

յայնմ ժամանակի որպէս ի քուն թմբութեան կային:

Իսկ մնացեալ էր մի միայն դուստր Սօֆիական ցեղէն, որ էր հարազատ քոյր շահ Թա[հ]մազին Էէ օրինաւոր կին Ռզա-Ղուլի Միրզին⁴⁰, որ համբերեաց նեղութեանց եւ դառնութեանց մինչեւ ցապարախտ խղճալի վախճան իւր, քանզի թէպէտ եւ որքան ի սմանէ զլուրն սպանութեանց եղբօրն եւ որդւոց նորա թաքուցեալք լինէին, սակայն էհաս համբան յականջս նորա, իսկ նա ի առաջին պատահման տեսութեան յետ այսու լրոյն ի հարճնարանի անդ անհամբեր դառնութեամբ, կսկծալի սրտիւ սկսաւ զանբաւականութիւնս իւր լալագին աշօք եւ հառաչմամբ սրտիւ ասել զայս.

«Շահ Թա[հ]մազ՝ եղբայր իմ գոլով, ի սկեսրառնէ իմմէ զրկեցեալ յամենայն ժառանգութենէ Պարսից *աթոռնոյն*⁴¹ եւ բնակելով ի յաքսորս՝ ոչ արար ընդդիմութիւն կամ վնաս ինչ առ իշխանութիւն Իրանայ երկրին, գոնեա եւ ոչ արարողութիւն ինչ գործեաց առ ի պատճառս տալոյ կացուցման առ նախկին կացութիւնս իւր, այլ մանավանդ թարց նենգութեան եւ տրտնջանաց ետ զբոլոր տիրապետութիւնն եւ Պարսից ցնադիր, եւ ըստ կարգաւորութեան եւ Պարսից ցնադիր, եւ ըստ կարգաւորութեան Ետան՝ ըստ կամաց հաճութեան զօրաւոր Տեառն՝ միայն զհարկաւոր սակս ապրուստի նորա ոսկիօք նորին թարց տրտնջանաց ողորմելի միակեցութեամբ եւ անարգ յանկեան միում ան-

40 Ռզա-Ղուլի Միրզայի կինը շահ Սուլթան Հուսէյնի դուստր Ֆաթիմա Սուլթան Բեգումն էր (տե՛ս *The Cambridge History of Iran*, vol. 7. Genealogical Tables, p. 960):

41 Նկատի ունի այն հանգամանքը, որ Նադիրը 1732 թ. օգոստոսի 22-ին «ընկէց զշահ Թախմասային ի թագաւորութենէն, եւ առաքեաց զնա ի խորասան ի քաղաքն Սաւզար, յորում պահել զնա զգոյշութեամբ հրամայեաց: Իսկ ի տեղի նորա կարգեաց թագաւոր զփոքրագոյն մանուկ նորի նորա եւ անուանեաց զնա Ծախ Արաս» (տե՛ս Տէր-Աւետիսեան Ս., *Նադիր շահի արշաւանքները (ըստ Յակոբ Ծամախեցու)*, Երևան, 1940, էջ 36-37, Այլնի՝ *Походы Тимур-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акона Шамахеви*, Тифлис, 1932, с. 9):

ցուցանէր զտառապեալ կեանս իւր, իսկ զայս զի՛նչ շարութիւն իցէ, զի՛նչ գազանաբարոյութիւն եւ որպիսի՛ տմարդութիւն, որ բառնալ զկեանս նորա, որ սակս այնորիկ հրաժարեաց ի բոլոր թագաւորութենէն, կորուսեալ զնա, որ զկորուսանելոյ որդւոցն ներեաց, մեռուցանել զնա՛, ընդ որով փառօք եւ պատուով ինքեանք կենդանացան, ո՛հ երախտամոռ եւ անշնորհակալ ցեղ եւ ազգ Նադիրի, չորքոտանի անասուն, անգութ եւ անզգայ խստապարանոց գազան»:

Եւ այսպէս լեզու վշտալից եւ սրտաթափ թնկաւորագն դստեր այլեւս յաւել տարածեալ բանիւք երկարել կարեր, սակայն ո՛չ համբերեաց Ռզա-Ղուլի Միրզա այսոց վիրաւորեցուցիչ նախատական բանից, իսկոյն սուսերան ձեռամբ իւրով զբանսն ընդ նոսին եւ զկեանս նորա բառնալով (51բ) եհատ եւ սպանեաց զնա՝ տալով նմա զպատիւն վերջին ի թաղման մարմնոյ նորա ի միում տեղուշ ընդ եղբօր նորին յերեւելի եւ յատուկ գերեզմանատան ի Մաշադ քաղաքի:

Եւ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ եկն էհաս համբաւ քաղցրալուր բարբախտ եւ յաղթող շահ Նադիրայ՝ սակս յաղթելոյ զգլխաւոր եւ անուանի վերակացու եւ կառավարող երկրին Մօղոլայ զնէսիրխան⁴², որ եկեալ էր մերձ Փիշաբար անուանեալ տեղույն ընդդէմ շահին ուրիշ հազարաւ⁴³, նաեւ լուրս բարիս վասն զօրութեանց եւ որպիսութեանց պատերազմական գործառ[ն]ութեանց, որ յառաջադրեալ էր շահ արշաւել ի կողմն յայն հեռաւոր: Եւ ապա յետ համբաւոյս այսորիկ թարց յամեցման նորագոյն եւս էհաս լուր սակս առման հնդկաց հնագոյն *աթոռնոսիստ քաղաքին Լահորու*⁴⁴, եւ ընդ

42 Փեշաւարի Նասր խանի զօրքի դէմ Նադիր շահի մղած կռուի մասին տե՛ս Мухаммад-Кавим, *указ. соч.*, с. 72-79, Քիչուր Արուսի, *Աշխ.*, էջ 108:

43 Նադիր շահի բանակը Փեշաւար է մտել 1738 թ. Այլնիքերին (տե՛ս Տինխա Ն., Բաներձի Ա., *указ. соч.*, с. 278):

44 Նադիր շահի բանակը Լահոր է մտել 1738 թ. դեկտեմբերի 20-ին:

սիկք ո՛չ էին անկեալք, սակայն նադիր գոլով փութածաման, խոհեմ եւ արի ի գործս իւր, յոյժ սաստիկ եւ ահարկու շարժողութեամբ զինքն եւ զգորս իւր ազատեաց ի վտանկէն յայնմանէ՛ հեղով զարինս բազում իբրեւ վտակս ջուրց ի տեղին յայնմիկ խառնիճաղանջ խռովարար ամբոխաց⁵⁴:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա ի գարնան մինչեւ ցբողոր ամառն 1740-երորդ յամին անցուցանէր զժամանակն ի կողմանս Թէհրանայ եւ սպասելով մնայր համբաւոյ ըղձալի կամեցողութեան իւրոյ ի յերկրէն Հնդկաց, իսկ հակառակ նմին առաքեալն շահ նադիրայ յեւրանելոյն իւրոյ ի Հնդկաց ճանապարհէ անդի զաստիճանաւոր այր ոմն, որում անունն Քէրիմ բէգ, առ Դուռն Օսմանցուոց հանդերձ արքունական գրովք, եւ ի գնալն նորա ի վերայ երկրին Պարսից ժամանակս աշնան ներկայացեալ յայտնեցաւ առաջի Ռզա-Ղուլի Միրզին եւ պատմեաց նմա զհաւաստի որպիսութիւնքն ամենայն, եւ թէ շահ բարեյաջող (53բ) առողջութեամբ զօրօքն իւրովք անդրէն դառնալով գայ, բայց տեղակալն աթոռոյն սասցելոցն էւս յոյժ դժկարին կամէր հաւատալ:

Եւ ապա, յորժամ սկսան ի բանակէ շահին գալ յաճախակի սուրհանդակս առ նա՝ հանդերձ հրովարտակօք, ընդ յոր եւ ի մէջ այլոց բանից հրամայեցեալ էր նմա երթալ ընդառաջ ծնօղին իւրոյ ի սահմանական քաղաքն Հէրաթ:

Յայնժամ Ռզա-Ղուլի Միրզա հարկաւորեալ լինի զրկիլ ի լրացուցմանէ կամեցողութեան իւրոյ: Բայց, սակայն, մասամբ ինչ ոչ սակաւ փափկանայր ճաշակմամբ բարձր իշխանութենէն եւ՝ քաղցրանայր ի պտղոց նորա, քանզի ո՛չ կարաց համբերել արդէն, զի միջնորդութեամբ պատրաստութեանն ի ժամանակի իւրում սպասել, այլ սկսաւ ձեռնամուխ լինիլ առ ի փութապէս իւրացուցանել զիշխանութիւնն Պարսից այլովք հնարիւք՝ այսու կերպիւ:

Յայնմ ժամանակի էր ի մօտ նորա ըստ կարգաւորութեան հօր իւրոյ զհարազադ քեռի մօր նորա՝ զսարգար (զլսաւոր զօրապետ) Լօթֆալի խան, որ առաջին կարգադրօղ, գիտակ եւ մասնակից ծածուկ խորհրդոց եւ գործոց Ռզա-Ղուլի Միրզին, խորհրդակից էր նմա: Արդ, քեռորդին ընդ քեռոյն իւրոյ առանձին սկսաւ աւել հառաչմամբ սրտիւ այսպէս.

«Ժամանակ եւ բախտն ո՛չ ետուն թոյլ առ ի լցուցանել ինձ զկամեցողութիւնս իմ. թէպէտ ո՛չ եմ երկբայ սակս ջերմագոյն սիրոյ հօր իմոյ, որ ունի առ յիս, եւ ըստ օրինաց աթոռն հայրենական ինձ պատկանի, քանզի ես անդրանկածին եմ իսկ, սակայն յոյժ համբերութիւն եւ բազում ժամանակ սպասել պարտիմ, բայց ո՛վ որքան կենդանի մնալ կարէ, զայն իմանալ ո՛չ է կար: Հայր իմ այժմ այսպիսի յաղթանակութեամբ փառաւորի եւ ամրակազմ անձամբ իւրով ո՛չ երբէք կամեսցի խաղաղութեամբ կեալ, զի ի նմա գոն երկարատես մտածմունք կամեցողութեան եւ օրաւոր նորագոյնս ծնանին, ամենայն ուրեք ի գործառնութիւնս եւ ի բանս ինքնին ի յատեան դատողութեան նստի, զինքն հռչակաւոր փառօք զարդարէ, անուն նորա ահաւոր ձայնիւ տարածի, սաստիկ պատերազմաւ յաղթեցեալքն յաւելու, եւ զերկիրս Պարսից աւերել ո՛չ դադարի: Այժմ ես (54ա) բարեգոյն չափու հասակի եմ, իղձ եւ զուարթութիւն արիութեան իմոյ կորուսանել պարտաւորիմ: Լուար յինէն դու, թէ որպէս գրէ սակս գնալոյ իմոյ Հէրաթ ընդառաջ նորա: Նա այժմ ոչ է այն, որ ի Ալիլարադ հաստատեաց զիս լինիլ տեղակալ Պարսից աթոռոյն, սակս որոյ ընդ իս ա-

54 Ջոնս Հանուէն Դելիի բնակչութեան կոտորածի մասին գրում է. «Եւ սիոնեցան զօրք Պարսից ընդ քաղաքն, եւ սկսան խորտակել զդրոմն տանց եւ պալատից, եւ կոտորել զժողովուրդն անասնձ արտմտութեամբ, ոչ ի հասակս եւ ոչ ի ցեղս խնայէին... Եւ կոտորածն սկսանէր ի յուրս ժամէ առաւօտուն մինչեւ ցերեք ժամն զկնի կէսաւորն, այսինքն՝ յերկուց ժամուց առաւօտուն մինչեւ ցիւն ժամն: Եւ արք իբրեւ չորս հարիւր ի Պարսից ազգէն մեռանէին, իսկ ի ժողովրդենէ քաղքին ոչ մուսաք քան հարիւր եւ տասն հազար անձինք կորցնէին» (տե՛ս Հանուէ, մշ. աշխ., էջ 116-117): Հանուէի տուեալները խիստ չափազանցուած են: Ըստ հնդիկ պատմաբանների՝ Դելիի կոտորածի ժամանակ զոհուել է 20,000 մարդ (տե՛ս Сивиха Н., Банерджи А., указ. соч., с. 279):

ռանձին ծածուկ խօսակցեաց. նա յայնմ ժամանակի, ի գնալն իւրում [ի] հնդիկս, ո՛չ յուսայր այնքան բազումս ստանալ անդի: Իրաւի, բախտաւոր է հայր իմ եւ բախտաւորագոյն, այլ ես այժմ զիս ապաբախտ անուանել կարեմ, քանզի պարտաւորիմ առ նա գնալ եւ լինիլ հաւասարակից կարգաւ այլոց օտարաց, բայց միայն թագաւորազնութեան անուամբ յօտարաց գանազանիլ կարեմ: Զի՛նչ ապա ուրեմն մխիթարութիւն եւ ապաւին ի սմանէ ինձ, որպիսի կերպիւ ենթադատել կարես, ո՛վ սիրելի քեռի իմ, ի գործոցս յայսցանէ՛ս:

Եւ Լօթֆալի խան յաղագս այսորիկ հրաժարեցաւ զհետեւեցեալ բանիւքս այսոքիւք.

«Ո՛վ բարձրապատիւ, մի՛ տրտմիր, քանզի ըստ օրինաց իրաւունս ունիս ծննդեամբդ, նաեւս յատուկ իմն շնորհս պարգ[ել]աց գոն ի քեզ, եւ յոյժ գովելի էն որպիսութիւնք եւ գերազանցութիւնք քո, մանաւանդ ո՛չ սակաւ փորձառութեամբ ցուցան իմաստնաբար կառավարութեան քում, զորս գ[ել]րեցին զսիրտք պարսից՝ նոքա միշտ ի սրտէ ցանկան լսել զանուն թագաւորութեան քոյ: Թո՛ղ ուրեմն, թէպէտ հայր քո շահ նադիր ուրախացուցեալ է զնոսա, շնորհելով նոցա զհարկսն երեքամեայ⁵⁵, սակայն զինչ լինելոց իցէ, ապա ըստ յայտնի բնութեան նորա, որ պահանջիցէ էւս քան զէս առաւել ի նոցունց: Արդ, պարսիկք պատուեն եւ սիրեն զքեզ, որպէս բարձրապատուութիւն քո գիտէ, որ ի կառավարութեան քում ի զանազան պատահմունս նշանակեալ փորձեցեր զնոսա, իսկ այժմ արգելէ ժամանակն, տէ՛ր իմ, որ քո իսկ բարձրագոյն արժանապատուութիւնն ընդ արձակութեան իւրում ի կիր առնել կարասցէ: Արդ, այժմ արա՛ շնորհս ստանալ զհամբերութիւն»:

55 Նկատի ունի այն հաճախմանքը, որ Նադիր շահը Հնդկաստան արշաւելուց եւ 1739-ին Դելի գրաւելուց յետոյ, տիրանալով այդ երկրի լիւս գրաւելուց յետոյ, տիրանալով այդ երկրի ամբար հարստութիւններին, 1151 հ. թ. զի հեջրէամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով իրանի բնակիչներին երեք տարով առաւել է հարկերի զգալի մասից (տե՛ս Арунова М., Ашрафян К., указ. соч., с. 87-93):

Առ այն սասց Ռզա-Ղուլի Միրզա. «Մինչեւ ցե՛րք կարեմ համբերել»:

(54բ) Իսկ Լօթֆալի խանն ընդառաջ մատուցեալ սասց.

«Իրաւի, զի հնագոյն եւ նորագոյն պարսից եւ այլ թուրքմանաց տարեցուցք հաստատուն ցուցանեն, թէ որով կերպիւ իցեն պատահեալ զստացումն որդւոց զժառանգութիւնն հայրենեաց, այսինքն միջնորդութեամբ ելանելոյ աստի կենացս առ հանդերձեալն հարց իւրեանց: Ահա՛, յայտնի իսկ է, զի նադիր՝ հայր քո, բաւական փառօք եկաց, իսկ արդէն ընթանայ նա առ հասակս վերջին⁵⁶, ահա ժամանակ է նմա անդրաբնակիլ յերկինս, եւ քեզ իսկ փթթեալ հասակաւ թագաւորազնիդ, իշխել արժան է ի վերայ երկրիս, եւ զայս ո՛չ է նորագոյն, այլ ի վաղուց հետէ եղեալ գործ»:

Քեռորդին էհարց ի քեռոյն. «Ուրեմն այսպիսի պատահման ս՛րպիսի կերպիւ կարէ հետեւել հնագոյն օրինակին»:

Եւ Լօթֆալի խան հրամանաւ նորա ել արտաքս առ ժամ մի, եւ կոչեաց ի յազգականացն զհազարապետ մի, որում անունն Մահմէդ բէկ, ի ցեղէն ավշարաց, ուստի եւ զնադիր շահ ունի զսկիզբն իւր: Հրամայեաց նմա, զի բերցէ գանուանի հրացանակիր նշանահար ոմն ի պարսից⁵⁷ տարաշրջիկ արանց, յոյժ հմուտ ի արհեստս իւր. առ ներկայութեան Ռզա-Ղուլի Միրզին, իբր թէ յաղագս զբօսանաց ցուցանիցէ նմա զճարտարութիւն իւր: Իսկ նա այնքան հմուտ էր, զի շափ ստակի միոյ բոլորակութեան գնտակաւ հարուկ կարէր անսղալ: Հաւանեաց յայսմ քաջն համարձակ, եւ ո՛չ մնաց նմա սակս այլոյ իրիւք խորհուրդ առնել ընդ քեռոյն իւրոյ՝ ունելով ի ձեռին իւրում նիւթս յարմար եւ հնարաւոր ընդ արձակութեան, որ ի գործ ածիցէ: Եւ այսպէս թարց ամենայնի յամեցողութեան խորհուրդ վասն հայրասպանութեան ի մէջ ե-

56 Այդ ժամանակ Նադիր շահը 52 տարեկան էր: 57 Ըստ Ջ. Հանուէի՝ այդ դիպուկահարը ոչ թե պարսիկ էր, այլ աֆղան (տե՛ս Հանուէ, մշ. աշխ., էջ 138):

րից անձանցն հաստատեցաւ ենթ երդման, սակայն զնոյնն ոչ յառաջ ի գործ կատարել, քան զդառնալ շահ նադիրին անդրէն ի Պարս, նաեւ ի յայնմ ժամու կարի յոյժ զգուշութեամբ, եւ ընտրել զժամանակ եւ պատկանաւոր յարմար տեղիս:

Յաղագս խորհրդոյ այսորիկ նաեւ հազարապետն Մահմէդ բէկ գիտակ եղեւ, որպէս սակա այսորիկ առաջիկայ գրեցելոցն (55ա) յայտնի լինելոց է: Եւ Ռզա-Ղուլի Միրզա, բացի խոստմանցն յոյժ բազում պարգեւաց ընդունողին զայնպիսի եղեռնագործութեան, ետ նմա վասն ապրուստի նորա մինչեւ զերէք հարիւր թուման, որում ենթ անուանակոչութեան եկամուտ առն թողելով զնաց ի ճանապարհս իւր առ կողմունսն սահմանական, յորմէ յետէ սպասէր ի գալստեան նադիր շահին իսկ:

Եւ տեղակալն աթոռոյն ընդ յառաջ էլանել հօր իւրոյ յոյժ յամրապէս պատրաստիր, սակայն ստացեալ կրկին զհարկադրական հրովարտակ յաղագս այնորիկ, նաեւ վասն հաշուից ի ժամանակի կառուարութեան իշխանութեան արքունական ելումտից, յայնժամ հարկադրեալ եղեւ կատարել զկամս ծնողին իւրոյ: Եւ ընդ ժամանակն ընդ այնոսիկ ի բոլոր կառավարութեան իւրում զժողովեալսն ի պարսից ենթ զանազան զրպարտական պատշառանաց եւ յափշտակողական կերպիւ, բացի հարկիցն արքունական, դրամս երկու հարիւր հազար թուման ետ ի պահեստ ի ձեռս առն հաւատարմի: Եւ ինքն ընդ պատերազմական գնդի զօրօքն իւրովք, նաեւ զքեռին իւր ընդ նմա, ի միջակետէ պարսից ել խաղաց գնաց աճապարմամբ ի ճանապարհ առ նշանակեալ տեղին, եւ վերջապէս ի մօտաւոր կողմանցն Հէրաթայ⁵⁸ ներկայացեալ յայտնեցաւ որդի արքային առաջի ծնողին իւրում եւ մատոյց նմա գրով զհրամայեցեալ հաշիւան:

Եւ շահ նադիր յայնմ ժամանակի, վասն յաղթելոյ զհնդիկս, շահունշահ անուանիր, որ

58 Նադիր շահի բանակը Հերաթ էր հասել 1740 թ. յունիսի 4-ին (տե՛ս Կիշմիշեւ Շ., указ. соч., с. 211):

Եւ ընկալաւ զորդին իւր առաւել իբրեւ զթագաւոր, քան թէ ծնող: Աստ մարթէ իմանալ, զի զայս փոխարկութեան սիրոյ պատճառն յամեցողութիւն յանդիման գնալոյ որդւոյն իւրոյ եղեւ: Եւ նադիր այլեւս ի նմին աւուր մեծամեծ նախարարովքն իւրովք արար հանդէս տեսութեան զօրականացն գնդին բերեցելոյ որդւով նորին, եւ հրամայեաց բաժանել զնոսին ի գունդան իւր, եւ Ռզա-Ղուլի Միրզին լինիլ եւ մնալ ի դրունս արքունի, սակայն թարց ամենայնի գործակալութեան⁵⁹, քանզի կառավարութիւնն գլխաւոր ի վերայ Պարսից վերստին անուամբ շահին (55բ) գործ առեալ եղեւ, եւ ետ ցլօթֆալի խան ըստ աստիճանի նորա նախարարութիւն ի վերայ սահմանական զօրացն պատերազմողաց:

Եւ ապա, յորժամ շահ նադիր առ ի տիրապետել զԲուխարայ եւ զԽիւայ ճանապարհորդեաց եւ եմուտ յերկիրն թշնամեաց, կարգաւորեաց զորդին իւր սպառազինութեամբ՝ առ ի որոնումն եւ ըմբռնումն զօգբէգս⁶⁰ ի զանազան շրջակայ կողմունսն արշաւանօք, առ յորս նա առաւել կորոյս, քան թէ ստացաւ, նաեւ փութով հիւանդացաւ այնպէս, զի հայրն ոչ հանդուրժեաց զտեսանել զնա, որ եւ ի նոյն ժամանակի բոլոր զօրքն պարսից սակա շերմագոյն սիրոյ հօրն առ զորդին ակնատես հաւաստի գոլով վկայարանէին: Եւ նադիր մխիթարէր զորդին իւր զՌզա-Ղուլի Միրզա քաղցր բանիւք, նաեւ խոստացաւ շնորհել նմա ի յառողջանալ նորին գնալ ի գաւառն Խորասանու ի քաղաքն Մաշադ, վասն հանգիստ բնակութեան նորին, որ

59 Ռզա-Ղուլի Միրզան կառավարել է Իրանը մինչեւ 1740 թ. մայիսը, երբ Նադիր շահը վերադարձել է Հնդկաստանից (տե՛ս Մատեմադարանի պարսկերէն վաւերագրերը. հրովարտակներ, պր. IV, կազմեց Ք. Կոստիկեանը, Երեւան, 2008, էջ 14):

60 Նադիր շահի այս արշաւանքի մասին տե՛ս Հաւուէ, Աշ. աշխ., էջ 135-137. Шеманский А., Надир-шах и его походы в Афганистан, Индию, Бухару, Хиву, Туркмению, "Средняя Азия", Ташкент, 1911, кн. VIII, IX.

Եւ ի ժամանակին անդ գնացեալ եղեւ իսկ եւ կատարեալ առողջացաւ ի հիւանդութենէ իւրմէ:

Եւ ի դառնալն հօր նորին՝ նորապէս յաղթողն Բուխարու եւ Խիվու ի Խորասան յամի 1741, սոնախմբեցին որդւովն ի միասին զօրտարեմտին պարսից, որ կարգաւորեալ է ի նոցունց ի սկսանիլ գարնան, քանզի հասարակաբար պատահի ըստ սօմարի տեղոյս իններորդ աւուր մարտի ամսոյն: Ի սմին աւուր նադիր, ըստ կամեցողութեան իւրոյ, շինեցեալ անհամեմատ գնոց պսակն (դիւադեմ), որ անուանեալ էր նադիրաւ կամ պատուական ոստ պսակի՝ զշորս խաշաձեւ ջղայից, յոյժ հարստագոյն եւ մեծագին պատուական ակամբ զարդարեալ, ի նշանակութիւն իշխանութեան իւրոյ ի վերայ շորս թագաւորութեան, այսինքն՝ Պարսից, Հնդկաց, Մեծի Թաթարաց եւ զՕսմանցոց թագաւորութեան, քանզի նա՝ տիրելով զպարս, յաղթեաց զհնդիկս, եւ Բուխարայ ընդ Խիւաւ եւ զԲալխ, որ է գլխաւոր երկիր Թաթարաց, եւ զսուլթանն Օսմանցոց⁶¹ ի սրտի իւրում կանխապէս տպաւորեալ էր յաղթել⁶², որ եւ զայսու խորհրդով զպատուական ջղայն գայն եղ ի գլուխ իւր: Եւ զայն ամենայն ժամանակս կենաց կյանուհետեւ, ընդ ամենայն ժամանակս կենաց իւրոց մինչեւ ցվախճան իւր⁶³, միջոցաւ վեց եւ կէս ամաց, այլեւս ոչ երբէք եղ զպսակն գայն ի գլուխ իւր, բայց միայն հոշակիւր զանուն նորին՝ անգին պսակ կամ ջղայ նադիրայ:

Եւ որպէս անփոփոխ կամեցողութեամբ յօժարեաց (56ա) նա ուժգին զօրու զօրութեամբ եւ արշաւանօք խաղալ գնալ եւ յարձակիլ ի վերայ Դաղստանայ լեռնաբնակաց ի վրէժխնդրու-

61 Այդ ժամանակ Օսմանեան կայսրութեան սուլթանն էր Մահմուդը (1730-1754):

62 1743 թ. աշնանը Նադիր շահը Աորից պատերազմ սկսեց Թուրքիայի դէմ՝ Ապառակ ունեւալով գրաւել Բաղդադը: Կոիւները փոփոխակի յաջողութիւններով շարունակուեցին մինչեւ 1746 թ.: Թուրք-իրանական 1743-1746 թթ. պատերազմն աւարտուեց 1746 թ. սեպտեմբերի 4-ի հաշտութեամբ:

63 Նադիր շահը դաւադրաբար սպանուել է 1747 թ. յունիսի 20-ին Խորասանում՝ իր վրանի մէջ (այդ մասին տե՛ս Հաւուէ, Աշ. աշխ., էջ 172):

թիւն անդր կորուսելոյ զհարազադ եղբօր իւրոյ զԻբրահիմ խանին⁶⁴ (սակայն զստուլյկ էութիւն յայսմ գործառնութեան ի նմա զայլ իմն երկարատես մտածմունք գոյին, յաղակս որոյ աստ յիշելն ոչ է մեզ տեղի)⁶⁵, նոյնպէս եւ կարգաւորելով զճանապարհս իւր՝ ընթանալ ի կողմանս գաւառացն, եղելոց առ ծովեզերքն Կասպիական թողով գայնս ի յաջակողմ առ յետկոյս լերանցն, առ յոր կողմունս, մանաւանդ ընդ յայս ճանապարհ յանդիման Մագանդարանայ եւ Գիլանայ, ուր ամենայն եզերտքն են անտառախիտ տեղիս: Իսկ գլխաւոր դիրք բնի զօրացն կային բանակաւ բացատուութեամբ ի միմեանց ի վերայ ոմանց վերստաց՝ մօտ առ Բաբուլյո գումբէթ ի կողմանսն Թէհրանայ, ուր հրովարտակօք շահ նադիրայ յառաջագոյն կոչեցեալք էին յամենայն քաղաքաց բոլոր Պարսկաստանայ յամենայն ազգաց հոգեւոր անձանց, նախարարաց, քաղաքապետաց, ծերակուտից եւ արանց աստիճանաւորաց: Սակայն առ զի՛նչ վախճան այսպիսի ընդհանրական ժողովքն կազմեցաւ պատրաստեցաւ, առ այս հաւաստին գիտացեալ ոչ եղեւ, քանզի խորին եւ ծածուկ կամք շահ նադիրայ ճանաչել եւ իմանալ էր յոյժ դժուարին:

Եւ յաղագս այսորիկ տարածեցաւ ի մէջ ազգացն զանազան կարծիս. ոմանք կոչումս զայս միայն առ այս հաստատէին, թէ նադիր ի աւարտել զայնպիսի հոշակաւոր եւ երեւելի յաղթութիւնսն, կամեցաւ փառաւորապէս ցուցանել յաշխարհի իւրում, այլք կարծէին, թէ նա զանմեղութիւն իւր սակա արեան շահ Թա[հ]մագին առաջի այնքան բազմութեան ժողովելոց կամի խոստովանիլ: Իրաւի, զի յառաջակայք (56բ) յանդիման շահ նադիրայ, ի մէջ այլոց

64 Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը սպանուել էր 1738 թ. լեզգիների դէմ մղած կոիւներից մեկում (տե՛ս Иванов М., Очерк истории Ирана, М., 1952, с. 102):

65 Ըստ այլ կարծիքների՝ Նադիր շահի դաւատանեան արշաւանքը կովկասեան լեռնակամների շրջանում Ռուսաստանի աճող ազդեցութիւնը թուլացնելու նպատակ էր հետապնդում (տե՛ս Կիշմիշեւ Շ., указ. соч., с. 214):

խից էլ ապրելեաց նորա ընդ սպասաւորս եւ պաշտօնեայս իւր եւ կարգաւորեաց դրամս բաւական չափով ստանալ նմա ի մտիցն թէհրանայ, եւ ըստ երեւելի կամեցողութեան շահին, իբր սակս առաւել հաւատարմաբար պահպանութեան զառողջութիւնն որդւոյն, տուան նմա զերկուս պալատական ներքինիս շահի, բայց ըստ ծածուկ դիտաւորութեան նորա՝ կացուցեալ էր զնոսա ընդ նմա, զի վերատեսուչ լինիցին նմա, եւ անքուն սկամբ զննեսցեն եւ իմասցեն՝ գուցէ Ռզա-Ղուլի Միրզա խօսիցէ երբէք բանս ինչ սակս պատահեալ փորձութեան շահին: Եւ բացի ներքինեացն կարգաւորեցին ընդ նմա նաեւս պատուաւոր այր ոմն ատենագիր Միրզա Ահմէդ անուն, ի սպասաւորութիւն Ռզա-Ղուլի Միրզին վասն գրագրութեան գործոց:

Եւ այսպէս որդին մնաց ի թէհրան, եւ հայրն ըստ առեալ կամեցողութեան իւրոյ՝ երկարեաց զճանապարհորդութիւն իւր առ Դաղստան⁶⁷: Յայնմ ժամանակի եկին արշաւանօք, ըստ կերպի սուրհանդակի, պատկերահանքն ի բանակ շահին: Նադիրը՝ զվաստակեալ եւ ո՛չ ձանձրացեալ յանդադար ճանապարհորդութեանցն եւ աշխատանացն ի կառաւարութենէ թագաւորութեան գործոցն (58թ) անձամբ անձին իւրով բաժանեաց նաեւ զժամանակ ի վերայ նախընթացեալ գործոցն՝ ասելով պատկերահանացն մի լըխտ միոջէ զնշանակութիւն եւ զձեւակերպութիւնս դիմաց շարածձիկ հրացանակրիճին:

Արդ, ոչ գոյ սակս յայսմ հակասութիւն, զի պատկերահանքն պարսից թէպէտ դէմք մարդոյ երանգօք ի բնական նմանութեան կենդանութիւն տալ ոչ են հմուտք, սակայն նմանութիւնն պատկերակերպել կարօղք են: Արդ, նկարեցեալ եղեն պատկերք մարդասպանին չափաւոր համարաւ եւ զամենայն զնոսին իւրաքանչիւրն հրովարտակաւ շահ նադիրայ ի տեղիս տեղիս ընդ ամենայն գաւառ ձեռամբ յատուկ արանց առաքեցեալք եղեն սաստիկ հրամանաւ, որպէս-

զի իւրաքանչիւր կառավարիչ յիւրում իշխանութեան ամենայն կերպիւ հետեւելով որոնիցէ եւ գտանիցէ զայր ըստ նմանութեան առաքեցեալ պատկերին, եւ յորում ժամու գտանեցեալ լինի՝ զնա երկաթակապ շղթայիք ենթ սաստիկ պահպանաց թարց յամեցողութեան առաքեսցեն ի բանակ իւր:

Յետ այսորիկ, առաջիկայ ժամանեալ ամսոյ նոյն յամին, առ ճանապարհորդութեամբն ի վերայ Դաղստանայ՝ յայտնեցեալք գտանեցան ի բանակի անդ գիրս ընկեցեալս յերկիր, ասելով ի նոցին՝ վասն սիրոյ երկոտասան պատգամաւորաց, ելելոց ի ցեղէն Մահմէդի, սակս ողջակիզելոյ պատրաստեցեալ է երկոտասան գուլայս՝ առ ի շնչել զկեանս հալածիչ եւ շարչարողին մերոյ: Բայց ահարկու հնչումն եւ ոչ սակաւ իւրք ինչ խռովեցոյց զանձն մեծի առնս ի դարի իւրում, մանաւանդ՝ ոչ վրդովեաց բարձրաթուիչ միտք նորա, քանզի նա զայն ունայնական բանսն ոչինչ համարեաց եւ ոչ եմոյծ ի լսելիս իւր, այլ ի ճանապարհորդութեան իւրում զուարճանայր թագաւորութեամբն Պարսից եւ յաղթութեամբ յերկրին Հնդկաց, քանզի իմաստութեամբ կառավարեաց, մեղաւորս պատժեաց զանազան մահուամբ, զարժանաւորս պարգեւատրեաց զօրս իւր ըստ կարգին պահեաց, միով բանի՛ սասցից նադիր ըստ սովորութեան լեզուին արաբացոց ընդիր ընդիր գործս գործեաց:

(59ա) Եւ յամսեանն հոգսեմբերի յամի 1741, յորժամ շահ նադիր ըստ անբախտութեան իւրոյ յաղթեցաւ առ լերամբն Դաղստանու⁶⁸, հարկաւորեալ եղեւ հուպ առ կողմամբն Դարբանդու մնալ եւ ձմերնանալ ի յերկրի լեռնական իշխանին Իսմու⁶⁹, մօտ ծովեզերն կասպիական:

68 Դաղստանում Նադիր շահը կորցնում է իր զօրքի 2/3-ը եւ ձիերի մեծ մասը (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 215):

69 Իսմի. Դաղստանի ֆեոդալներից (Արա մասիւն տե՛ս Արարհամեան Ա., Մի էջ Ազդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական շարաքերութիւնների պատմութիւնից, Է., 1953, էջ 29, 181):

67 Նադիր շահը Դաղստան է արշաւել 35 հազարանոց բանակով (տե՛ս Հաւուէ, Ա2. աշխ., էջ 146):

Յայնմ ժամանակին բերին սաստիկ կասանօք զշարածձիկն այն մարդասպան մերձ ի մէջ գիշերոյ, որ ըմբռնեալ էին զնա առ սահմանան Բուխարու յերկրին, որ եւ իսկոյն ի նոյն ժամու սակս նորա ի հարձնարանն շահին իմացուցին նմա: Իսկ նադիր իսկոյն հրամայեաց (թէպէտ ոչ էր սովորական ժամանակ) ի նշան ուրախութեան իւրոյ փողս հարկանել եւ ընդ ամենայն բանակն պատգամաւորօք իմատարօք ցուցանել, թէ շարակամ թշնամին կենաց իւրոյ գտանեցեալ է, որում եւ հրամայեաց մինչեւ ցգալ աւուր պահել ենթ սաստիկ պահպանութեամբ պահնորդաց:

Եւ ընդ առաւօտն շահն ել եւ եմուտ ի դատողական տաղաւար, եւ նոյն ժամայն հրամայեաց բերել առաջի իւր զմարդասպանն ի յատեան ներկայութեանն հասարակական առաջիկայից իւրոց, արանց աստիճանաւորաց մինչեւ ցերեք հարիւր անձանց, եւ կոչեաց զնա առ մերձ եւ ասաց ի ձայն.

«Մէք երդնումք քեզ ամենաբարձր Աստուծով եւ գրովն Ղօռանաւ, զի զքեզ ոչ սպանանեմք, ասա՛ մեզ զճշմարիտն, ո՛վ ամբարիշտ, ցած եւ չնչին արարած, որքն եւ ոստան սարդի, ո՛րպէս յանդգնեցար դու խորհել զշարութիւն եւ գործել զանօրէնութիւն ի վերայ կամեցողութեամբն բարձրելոյն յԱստուծոյ կարգեցեալ մեզ մեծ թագաւորիս կամ, ո՛վ դու որդի կորստեան, ոչ ի միտ առեր, զի ամենաբարձր Արարիչն անյայտաբար պահպանէ զընդրեալն իւր ամենազօր աջովն իւրով»:

Եւ թշնամին երկիրպագանելով պատասխանեաց նմա.

«Մեծ տէր եւ հզօր թագաւոր, կացցէ առողջ յաւիտեան, կեանք եւ մահ իմ կանխին այժմս ի կամաց քոց, ահա ճանաչեմ (59բ) ես, զի ամենաբարձրն Աստուած զքեզ՝ սիրեցեալդ զի ամենաբարձրն եւ ողորմի, եթէ ես ի ժամանակին յայնմիկ գիտացեալ էի, որ դու անկեալ յերկրէն ի վերայ երկրի կենդանի էիր, ես զքեզ եւ ի յայնմ տեղոջ գործս փութացուցանել կարէի, քանզի առ յիս ունէի ի պատրաստի

զգուլայս բազում, իսկ այժմ կամք քոյ է ընդ իս»:

Եւ լուեալ շահ նադիր զբանս զայս՝ կոչեաց առաջիկայք իւր մշտապէս եղեալ դահիճքն, եւ հրամայեաց առաջի իւր կուրացուցանել զշարակամն, որ եւ կատարեցաւ իսկոյն: Եւ յանձնեաց զնա առ ոմն երեւելի եւ հաւատարիմ առն պահել զնա, եւ շնորհեաց նմա ի նոյն ժամու ի բաւականութիւն ապրելոյ նորա յիսուն թուման: Նաեւ իսկոյն հրամայեաց առաքել ի Հերաթ առ երէց որդին իւր համբաւս զայս ուրախութեան, այսինքն՝ ըմբռնելոյ մարդասպանին:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա ի ստանալ զլուրս զայս, առ ի ցուցանել արտաբուսդ իբր ուրախութիւն իւր՝ շնորհեաց առաքեցելոյն զխիլայս հարուստս եւ բոլոր հանդերձիք յոտից մինչեւ ցզուլս զգեցոյց նմա (քանզի առ պարսիկս սովորութիւն է սակս մեծի ուրախական համբաւոց), եւ անդրէն յուղարկեաց զառաքեալն հանդերձ գրով, ի յորում առ ծնօղն իւր ի խորոց սրտէ զուրախութենէն մասնաւորիլն իւր ընդարձակ վկայութեամբ յայտն արար:

Եւ յետ այսու, ի հանդարտիլ ցաւոյն եւ առողջանալ աչաց շարակամին, նադիր ծածկաբար ի ժամս գիշերային առնոյր զնա եւ կացուցանէր առաջի իւր, եւ անձամբ անձին առանձին հարցաւորձ առնէր զնա, թէ ում ուսուցմամբն յանդգնեցաւ նա սողնուլ առ այնպիս[ի] գործ անօրէնութեան: Իսկ ապստամբն թարց ամենայնի գիմադարձութեան եւ բացասութեան, առանց սղալանաց, ստուգապէս մի ըստ միոջէ պատմեաց զճշմարիտն ասելով, թէ՛ երէց որդին քոյոյ մեծութեան Ռզա-Ղուլի Միրզա եւ սարդար Լօթֆալի խանն սակս այն արարողութեան հաւանեցուցին զիս, վասն որոյ նոքա ընդ իս երեքեանս միայն դաշինս եղինք, եւս (60ա) թէ հազարապետն Մահմէդ[դ] բէգ բերր զիս առ Ռզա-Ղուլի Միրզա, եւ թէ՛ ետես նա, զի ես հրացանաւ որպիսի ամբողջ ձգելով հարի առ նպատակն եւ այլն:

Հնարագէտն նադիր յորժամ իմացաւ զհաստատութիւն խորհրդոցն շարակամաց ան-

ձին անձին իւրոյ, այնքան համբերութիւն ստացաւ ի հրաբորբոք եւ ընդարձակ բարկութեան իւրում, մինչ զի սակաւ իւր կերպիւ նշան եւս ոչ եցոյց առ ի վրէժխնդրութեան այնց գործոց մինչեւ ցպատէ՛հ եւ յարմար ժամանակի իւրում, այլ մանաւանդ եւս առաւել ցուցանէր ի պալատի իւրում եղեալ աներորդւոյն իւրոյ Լօթֆալի խանին անփոխարկելի սէր ողորմածութեանս: Եւ այսպէս, յաւել քան զամիսս վեց յաղագս այսոց գործոց կային բոլորովին ի խորանին լուութեան:

Եւ յամիսս ամառնային յամի 1742 շահ Նադիր ինքնին հետամուտ լինէր լեռնական արանց ճանապարհորդութեամբն ի տեղիսն եւ ի ջեւանսն թշնամեաց՝ յանկարծակի] հրամայեաց կոչել առ ինքն զհազարապետն Մահմէդ բէգ, եւ առաջակայ հետեակին իւրոյ հրամայեաց խեղդել զնա: Իսկ նա ունեցաւ ժամանակ միայն բոպէ մի խնդրել զողորմութիւնն, որ եւ խնդրեաց, սակայն Նադիր ասաց զբանս զայս.

«Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին եւս խնայիցէաք»:

Եւ հազարապետն իսկոյն զրկեցեալ եղեւ ի կենաց, եւ ի յայս պատահանս մեծամեծքն պարսից խորին մտածմամբ մեծացուցանէն զասացեալ բանսն շահին: Սկսան կարծիս անկանիլ վասն Ռզա-Ղուլի Միրզին՝ սակաւ խորհրդոյ սպանութեան հօրն եւ թագաւորին իւրոյ: Բայց Լօթֆալի խան վարէր զինքն խոհեմութեամբ եւ կեղծաւորութեամբ, այնպէս՝ իբր թէ առ այն գործն ինքն ամենեւին ոչ իցէր մասնակից երբէք:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա, մնալով ի Թէհրան, զբօսնոյր փափկակեցութեամբ ի զուարճալի եւ ուրախարար տեղիսն արտաքոյ քաղաքին, եւ զերկոսին ներքինիսն, որք տուեալք (60բ) էին նմա ի ծնօղէն իւրմէ՛ մեռոյց զնոսա: Աստ մարթէ իմանալ իհարկէ վասն այնորիկ, զի իմացեալ եմիտ էառ, զի զնոսին ոչ եթէ վասն պահպանութեան առողջութեան նորա էին զարքեալք, այլ վասն փորձառութեան եւ վերահասութեան էին զնոսա յարկացեալք ընդ նմա:

Եւ շահ Նադիր ի յելսն ներկայ ամռան առաքեաց հրովարտակ սիրալիւր ողորմութեան որպէս առ երէց որդին, նմանապէս եւ առ միւս որդիսն իւր, նաեւ՝ առ յատկապէս ջերմ սիրով սիրեցեալ դեռահասակ թոռն իւր Շահրուխ Միրզա⁷⁰, որ ծնեալ էր ի կնոջէ Ռզա-Ղուլի Միրզին՝ արքայազնուհէ Սօֆիականէ, կոչել զնոսա առ ինքն այսու օրինակաւ, թէ՛ որովհետեւ իւրոյ մեծութիւնն շրջի անդրէն ի հեռաւոր տեղիս՝ յաղագս հնազանդեցուցանելոյ զթշնամիսն իւր, իսկ վասն բազմաժամանակեալ] կարօտութեան իւրոյ զերեսս որդւոց իւրոց փափակմամբ տեսանել կամի: Այժմ սրտի մտօք ցանկայ լցուցանել զկամեցողութիւն իւր եւ մխիթարիլ, եւ վասն այսորիկ բարեմտաբար հրամայէ միջակ որդւոյն Նէսիրօլլահ Միրզէ եւ կրտսեր որդւոյն Իմամ-Ղուլի Միրզէ եւ սիրելի պատուական թոռան իւրոյ Շահրուխ Միրզէ, զի ամենեքեան ի միասին էլանիցեն ի Մաշադայ եւ զալով ընդ յարմար ճանապարհաւ՝ զնասցեն ի Թէհրան, ուր միաւորեցի ընդ սիրելի Ռզա-Ղուլի Միրզին, եւ ամենեքեան ի միասին եկեցցեն ի դուռն իւրոյ մեծութեան:

⁷⁰ Ծահրուխ Միրզա. համադիսանում էր երկու դիմաստիաների՝ Սեֆեան եւ Աֆշար, շահերի թոռն: 1749 թ. գահընկէց է արել Իբրահիմ շահին: 1749 թ. դեկտեմբերին Ստրասանում Ծահրուխի դէմ խոտվութիւն է բարձրացրել Մեշհեդ քաղաքի շիա հոգեւորականութիւնը, որը արան յայտարարել է ալլախոս ու Նադիրի քաղաքակառուցեան հետեւորդ, եւ առաջ քաշել զահի իր թեկնածուին՝ միրզա Սէյիդ Մուհամմադին (Միր-Սէյիդ), որը տապալել է Ծահրուխին եւ կորացրել: Սակայն, 1750 թ. յունուարի 14-ին զօրավար Իսուֆ Ալի խան Ջալալիին իր հերթին գահընկէց է արել արան եւ զահի վրայ վերականգնել Ծահրուխին: Վերջինիս կառավարումը Ստրասանում ընդմիջումներով շարունակուել է մինչեւ 1796 թ.: 1754 եւ 1770 թթ. Աստիպուս էր իրեն ճանաչել որպէս Աֆղանստանի Ահմեդ շահ Դուրրանիի վասալ, իսկ 1760-ական թթ. կէսերից իշխանութիւնը բաժանում էր իր որդիներին՝ Նադիր Միրզայի եւ Նասերուլլահ Միրզայի հետ: Վախճանուել է 1796 թ. (տե՛ս Բայբուրդեան Վ., Իրանի պատմութիւն, Երևան, 2005, էջ 385-387, Шабани Р., Краткая история Ирана, Санкт-Петербург, 2008, с. 209):

Եւ այսպիսի կարգաւորութեամբ զերեք որդիսն շահ Նադիրայ եւ զթոռն նորա շուեցին ի Թէհրանայ եւ սկսան զալ: Բայց, Ռզա-Ղուլի Միրզա ի ճանապարհի անդ զչարեցաւ բարկութեամբ ի վերայ ատենադպրին, եւ ոչ ապրոյր նա ի մահուանէ, եթէ ոչ թագչիցէր ի նմանէ, եւ ի յայտնիլ նորա առ թագաւորն իւր՝ ասաց ցնա, թէ՛ ի որդւոյ քոյին մեծութեան զերկու ներքինիսն կորուսեալ եղեն, եւ կամէր զիս եւս սպանանել:

Եւ յամսեանն հոգտեմբերի 1742 յամին եկին թագաւորազունքն ամենեքեան ի Դարբանդ եւ կալան բնակութիւնք ի պալատին արքունի աւուրս (61ա) երիս վասն զանչելոյ, եւ ապա զնացին ի բանակ շահին, քանզի յայնմ ժամանակի էր շահ ենթ Բաշլու⁷¹ գեօղին՝ բացատութեամբ ի քաղաքէն քառասուն վերստ, զի սակաւ ձմերնանալոյ ընդ զօրսն իւր՝ անդ ժողովեալք էին:

Եւ ըստ հրովարտակի շահին, վասն զնաւոյ նոցին Դարբանդոյ մինչեւ ցբանակն, նշաւակեցեալ էր նոցա տեղի երեկօթս առնել առ կիսոյ ճանապարհաւ՝ առընթեր Բաշլուդամ գետով, եւ յորժամ եկին նոքա անդ եւ մտին ի տաղավար՝ սակաւ նոցա պատրաստեալ, յայնժամ եկն առ նոսա փութով էշիկաղայ⁷² մին՝ ընդ հրովարտակի շահին, յորում հրամանէր, զի միջակ եւ կրտսեր որդիք եւ զթոռն Շահրուխ Միրզայ զնասցեն ի պալատն տաղավարական, եւ Ռզա-Ղուլի Միրզի մնալ, զի ի միտում աւուր զնասցէ անդ:

Եւ ի մօտանալ նոյն երեք անձանց առ բանակն՝ ընդառաջ էլին նոցա պալատական աստիճանաւորքն հանդերձ հանդէսիւք, եւ ընկատիլաւ շահ զերկու որդիսն եւ զթոռն իւր յոյժ սիրով եւ ողորմածութեամբ, եւ արժանաւորեաց հրամայելով նոցա համբուրել զքղանցս պարեգօտին իւրոյ:

⁷¹ Բաշլու. գիւղ Դերբենդի հիւսիսային կողմում (տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 42):

⁷² Էշիկաղայս. Սեֆեան Իրանի արքունի պաշտօնեաներից էր, պալատի արարողապետը:

Եւ միտում աւուր եկն եւ զերէց որդին՝ Ռզա-Ղուլի Միրզա, որում ամենեւին պատիւ ինչ ոչ էտուն, եւ եմուտ նա ի գաւիթն պահնորդաց տաղավարին, որ կայր յանդիման դատաստանական տաղավարին, եւ էջ յերիվարէն եւ մերկեաց յինքենէ զթուրն եւ զաղեղն հանդերձ նետիւքն (քանզի ըստ սովորութեան պարսից ասացի երեսաց արքայի սպառազինեալ եւ ընդ գօտի ածեալ սրով ոչ մտանեն):

Յայնժամ մատուցեալ ազդեցին շահին յաղագս զալստեան նորա, եւ նա հրամայեաց թողուլ զնա ընդառաջ նորա, եւ Ռզա-Ղուլի Միրզա ընդ առաջնորդութեամբ էշիկաղային՝ հանդերձ զօրականօք, եմուտ յետկոյս վշեղէն վարագորին, այսինքն՝ արգելանոցին, երկիր եպագ արքային եւ ծնօղին իւրոյ, եւ եկաց հեռագոյն, քանզի թարց հրամանի ոչ ոք իշխէ մօտաւորիլ նմա:

Եւ հայեցեալ Նադիր ի վերայ որդւոյն՝ ետեսս զսուր կապեալ ըստ սովորութեան ի գօտւոյ նորա, որ էր խանջալն, գոչեաց՝ ասելով ահարկու (61բ) ձայնիւ.

«Բարձէք ի դմանէ զգէնն սրոյ»:

Եւ ընդդէմ նմին Ռզա-Ղուլի Միրզա պատասխանեաց խրոխտանօք, թէ՛ ոչ ունի ի վերայ իւր սպառազէնս ինչ, եւ առեալ յինքենէ զխանջալն կամէր ձգել զերկիր, բայց էշիկաղայն իսկոյն յափշտակեաց զայն ի ձեռաց նորա:

Եւ շահ, ասելով Ռզա-Ղուլի Միրզա՝ յիմար, հրամայեաց զնել ի վերայ նորա զկոծղ եւ ենթ պահապանաց պահել զնա ի բանդի, սակայն ի մէջ տաղավարի՝ մօտ առ կառավարական տաղավարին:

Եւ ի անցանիլ աւուրս ինչ՝ առաքեաց Նադիր զերկուս անուանի սիրելիսն իւր, այսինքն՝ զմօլլաբաշին⁷³ եւ զմիրզա Ջաքի⁷⁴ առ որդին

⁷³ Մօլլաբաշի. մահմեդական հոգեւորականութեան աստիճանակարգում բարձրագոյն պաշտօնն էր՝ ստեղծուած շահ Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին (տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. հրովարտ-

իւր յորդորական խրատիւք, զի նա բարեյօժար կամօք սակս շարահնար յանցանաց իւրոց թերեւս մեղա՛ գողցիցէ: Իսկ Ռզա-Ղուլի Միրզա ընդդէմ սմին այլեւայլ ունայն բանս բարբառելով տժգորհեաց՝ ասելով, իբր ոչ էթէ ինքն ի վերայ հօր իւրոյ, այլ թէ հայրն ի վերայ նորա իցէ խորհեալ զչար՝ կարգաւորելով ի վերայ իմ զերկու ներքինիս հանդերձ հրամանաւ, զի նոքա զիս զեղակուր առնիցէին, վասն որոյ եւ ես սպանի զնոսա: Նաեւ բամբասելով զհայր եւ զթագաւորն իւր՝ ասէր, թէ՛ հայր իմ իզուր եւ ի ունայն տեղի ի լեռնային տեղիսն զօրսն շարշարէ, անսուաղութեամբ բազումս մեռուցանէ եւ իզուր բազում մարդիկս կորուսանէ, էթէ նա իսկապէս թագաւորութիւնս կառավարիցէր, ուրեմն զանազան արդիւնարար գործս արտադրել կարէր, եւ երկիրս մեր յանդորր խաղաղութեամբ մնալ կարէր:

Եւ պատգամաւոր յորդորիչքն, ըստ բարեկամեցողութեան իւրեանց, որքան կարէր շանացին խոնարհեցուցանել զՌզա-Ղուլի Միրզա առ իսկագոյն ճանաչումն յանցանաց իւրոց եւ զղջումն սրտի մտօք, որպէսզի այնու հնարիւք գտանել զշահիդ՝ առ ի բառնալ զբարկութիւն շահին եւ ածել յորդոմութիւն, սակայն սնեալն կողապինդ գոռոզութեամբ եւ հպարտութեամբ թագաւորազն Ռզա-Ղուլի Միրզա ոչ կարացին հաւանեցուցանել:

Եւ ապա հարկաւորք եղեն զտրտնջողական բանսն նորա զստուկապէսն յայտնի առնել շահին: Իսկ շահ նադիր ցասումնալի (62ա) բարկութեամբ վառեալ եղեւ, եւ էառ զՌզա-Ղուլի Միրզա կապանօք եւ պահնորդօք առաջի իւր, եւ սաստիկ բարկութեամբ ասաց.

«Ով դու անմիտ եւ անզգամ, այդ որպիսի անլուր եւ անձանօթ բանս պտղաբերէս ի լեզուէ քումմէ, զի՛նչ մեծագոյն արարած իցես դու, զի առ ի տեղի բառնալոյ զկեանս քոյ՝ մեք,

գոլով մեծագոյն արքայ, կամեցաք ծածկաբար սակայն գարշելի հնարս ի գիր առնուլ վասն փրկութեան քո, բայց դու, ո՛վ եղկելի արարած, յկատուծոյ տուեալ մեզ իշխանութիւնն արհամարհե՛ս: Իսկ ա՛րդ, ահա այժմ զշունչ քո ի քէն ի բաց ելանիցէ»:

Եւ կոչեաց զդահիճս, հրամայել կամէր կուրացուցանել զնա (անդէն ստորանկեալ էր անարգաբար Ռզա-Ղուլի Միրզա ի վերայ երկրի), բայց հայեցեալ ի վերայ նորա՝ մորմոքեաց զսիրտ հայրական, արգելեաց աստ ծնօղն մերձենալ դահիճացն առ յաչս որդւոյն իւրոյ: Ապա հրամայեաց փայտիւ հարկանել մերկաբաց ոտիցն, եւ Ռզա-Ղուլի Միրզա փայտացեալ ասաց.

«Մի՛ թէ մեծամեծ թագաւորք այդպէս վարիցեն ընդ որդիսն իւրեանց»:

Եւ լուսւ պատասխանի ի հօրէն իւրմէ, երկրորդելով զնոյնն, թէ՛ զանպիտանդ զայդ, եւ համբերեաց նա մինչեւ ցլխուն գանից, եւ յետ այսու երկաթի ծանու կապանօք տարեալ եղեւ յիւր տաղալար:

Եւ յետ այսու հայեցարանէ իսկոյն հրամայեաց շահ կարգել ընդհանրական դատաստան ի վերայ Ռզա-Ղուլի Միրզին եւ դատել զնա ըստ օրինաց: Եւ ի բանակի անդ եղեալ աստիճանաւորաց բարձրագունից, միջակաց եւ ցածագունից ժողովեցան յաւել քան վարս հարիւր, եւ վասն նոցա իւրաքանչիւրոց յատուկ յատուկ նամադ⁷⁵ առ արգելանոցի անդ՝ յանդիման կառավարական կամ դատողական տաղալարին եղեալք եղեն: Եւ բաժանեցան դատաւորքն երիս կարգս աստիճանաց, եւ յորժամ կարգաւորեալ կառուցաւ յատեան, յայնժամ նադիր միջնորդութեամբ հոկաբարձուաց՝ մօլլայբաշիւն եւ միրզայ Զաքին, հրամայեաց առաջնորդել (62բ) առ յատեանն զբանս զայսոսիկ.

«Այնպիսի որդի, որ ունիցի կամս նենգութեամբ սպանանել զհայր իւր՝ ոչ պահպանելով ընդհանուր օրէնս եւ պատիւ աշխարհական սու հայրն պատկանեցեալ, զի՛նչ արժանաւորի

75 Նամադ. վերակացու:

տակներ, պր. III, կազմեց Ք. Կոստիկեանը, Երեւան, 2005, էջ 195):
74 Միրզա Զաքի 1743 թ. եղել է Նադիր շահի դեսպանը Բաղդադի Ահմեդ փաշայի մօտ (տե՛ս Համուէ, 62. աշխ., էջ 155):

նմա»,— հրամայելով ընդ նմին, զի իւրաքանչիւր դասք զվճիռս իւրեանց գրեսցեն որոշակի:

Եւ այսպէս, դասն առաջին՝ զատեալ ի միւս դասից, յորում էր եւ զԼօթֆալի խան, ամենայնքնն միաձայն գորդին իբրեւ զթշնամի հայրական կենացն՝ ի մահ, նաեւ՝ շարաշար, արժանի գոլ դատապարտեցին:

Երկրորդ դասն ենթադատեաց այսպէս, թէ.

«Ամբարիշտ է այնպիսի որդի, որ զբնական պարտականութիւնն իւր ո՛չ հատուցանէ ծնօղին իւրոյ, եւ անիծեալ է այնպիսի զաւակ, որ յանդգնի առնել զշարութիւն ծնօղին իւրում: Սակայն, ի յագս մարդկան, ըստ մեծի մասին, հայրք յինքեանց գոյացեալ կեանս մեղաւոր զաւակաց էթէ զրկիցեն ի կենաց, ապա հետեւի զգալի դառնութիւն վասն բնական ջերմագոյն սիրոյն, իսկ ա՛րդ պատուիրանազանց որդի թարց պատժոյ թողուլ ոչ է պարտ՝ որդի, որ մառախլապատեալ իջէ լուսաւորութիւն մտաց իւրոց՝ կուրացուցանել արժան է»: Երրորդ կարգաւորութիւն դասուցն, որ էր գերագոյնն ժողովք, բացին զբերանս իւրեանց՝ ասելով.

«Ով պարոնայք, աստ բանս գոյ ոչ վասն որդւոյ ուսմկաց, այլ վասն որդւոյ թագաւորի. թէպէտ թագաւորն է ինքնակալ եւ անեզրական իշխան, սակայն ըստ արդար իրաւանց զզաւակ իւր կորուսանել ոչ է պարտ. ըստ մարմնաւոր բնութիւնս լինելութիւն ոչ բարձրի, ըստ հնագոյն օրինաց եւ կանոնացն պարսից՝ նիւթ եւ գործիք մահացուցման ո՛չ հասանի երբէք ի վերայ արենակցաց արքայի: Արդ, որովհետեւ այնպիսի որդի, որ յոյժ մեծագոյն մեղանշեալ իցէ ընդդէմ թագաւորին եւ ծնօղի իւրում սակս իցէ ընդդէմ թագաւորին է նա պատժոյ լալագին եւ ուայնորիկ արժանի է նա պատժոյ լալագին եւ ուղորմելի կացութեան ըստ գործոց իւրոց. առաքել զնա ի յաքսոր այնպիսի տեղի, ուր արքայ կամեսցի, եւ պահել զնա միայն լոկ հացիւ եւ սոսկ ջրով՝ ենթ սաստիկ պահապանաց»:

Եւ զայս երեք կերպիւ դատողութեանց վճիռսն մատուցեալ եղեւ շահին ի ձեռն հոգաբարձուացն՝ մօլլայբաշիւ եւ միրզա Զաքի:

(63ա) Ապա հրամայեաց շահ նադիր ի ժողովեցելոցն քաղաքական եւ պատերազմական

երկրորդ եւ երրորդ դասք աստիճանաւորաց արանց արձակել ի բաց, եւ գլխաւոր զօրապետացն, որ էր առաջին դասուց, կալ եւ մնալ անմեկնելի ի տաղալարի պահապանաց: Նաեւ պալատական մեծամեծ աստիճանաւորացն ոչ հեռանալ ուրեք, եւ ինքն դարձաւ եւ եմուտ ի հարճնարանն ժամս ոմանս՝ սակս հանգստութեամբ խորհրդածելոյ, յորմէ եւ ել արտաք[ս] վաղվաղակի յոյժ բա[ր]կութեամբ եւ ահարկու դիմօք, եմուտ ի դատողական տաղալար, եւ կոչեաց զէշիկաղայն Մահմադ Ալի խան մերձ առ ինքն, եւ զծերակուտ դահիճապետն Մուղիբ Ալի բէգ, եւ ետ նոցա պատուէր հրամանի, զի քուեալ զդահիճան գնացցեն ի տաղալարն պահապանաց, նախ ասացցեն ցլօթֆալի խան, թէ՛ նա արեւեալ ապականեաց զպատուական պատանին զայն, այսինքն՝ Ռզա-Ղուլի Միրզա, եւ կուրացուցեն զնա:

Եւ հրամանս զայս կատարեցաւ ի թօթափիլ ական, եւ կամէր սարդար, զի բացասութեամբ բացայայտնիցէր բանս ինչ առ յականջս շահին, սակայն ոչ եղեւ նմա թողեալ: Եւ եկեալ էշիկաղայն ընդ դահիճապետին՝ կացին յանդիման երեսաց թագաւորին իւրեանց, երկիրպագին եւ մնային լուութեամբ, թէ՛ զինչ հետեւելոց իցէր յետ կատարման հրամայեցելոյն:

Եւ շահ սակաւիկ մի ի միտ էած, եւ դարձեալ կոչեաց զնոսա մօտ առ յինքն եւ հրամայեաց զրկել զերէց որդին իւր ի յաչացն նորին: Եւ նոքա ընթացան վաղվաղակի առ տաղալար Ռզա-Ղուլի Միրզին եւ յառաջագոյն ասացին նմա, թէ՛ թագաւոր եւ հայրն քո հրամայեաց կուրացուցանել զքեզ: Իսկ նա ի մտի իւրում հաստատ եւ հաւաստի հաւատալը եւ յուսայր զջերմագոյն սէր ծնօղին իւրոյ եւ գիտէր, որ ունէր ընդ ինքեան, վասն որոյ զասացեալն նոցա վարկաւ իբր գոլ սակս ահացուցման միայն: Եւ յանկարծակի յառաջ մատոյց զպարանոց իւր ի նստեալ տեղւոյն յայնմիկ եւ ասաց. «Ահա՛»:

Եւ յորժամ դահիճքն կալան զնա եւ ի բաց հանին զմի ակն նորա, յայնժամ թագաւորազն Ռզա-Ղուլի (63բ) Միրզա աղաղակեաց մեծաձայն.

«Ո՛հ հայր, կորեա՛ ես»⁷⁶:

Ի մօտաւորութենէ տաղավարին թէպէտ ձայնս այս ողբալի էհաս առ լսելիսն նադիրայ, սակայն, զի էր օր ցասումնալի բարկութեան նորա, ոչինչ օգնեաց ամենեւին, քանզի եւ զմիւս ակն ի բաց հանին իսկոյն:

Եւ այսպէս, ի վերջին աւուրսն հոգտեմբերի ամսոյն յամի 1742 անկաւ Ռզա-Ղուլի Միրզա յերկիր ուշաթափեալ: Եւ յորժամ ետես շահ նադիր առաջի իւր կացեալք զէշիկաղայն եւ ձերակուտն դահճաց, որ անլուր երկիրպագանէին նմա, համանգամայն հեղան արտասուս յաչաց նորա, այնքան, որքան կայր կացեալ ի տեղոյն յայնմիկ, եւ հեղմամբ արտասուօք եմուտ անդի ի պալատն հարճից, ուր հառաչանօք ողբայր դառնապէս: Եւ վիրավորեալ սրտիւ ժամս երիս աւաղելով վշտանայր՝ սակս անայիտան եւ անմարտի առնելոյ որդու իւրոյ՝ ասելով, թէ ինքն իւրովին կամօք զժառանգն իւր արժանաւոր կառավարօղ եւ գիտութեան տրօք պարգեւեալն եւ այլ յատուկ շնորհօք լցեալն Ռզա-Ղուլի Միրզա ոչնչացուց:


Չայս հայրական սիրով սգումն ոչ միայն ի ծածուկ, այլեւս ի յայտնի ոչ հանգոյց անձն նա-

դիրայ, քանզի նա յետ այսու տրտմալի պատահմանն ոչ էլ ի հարճնարանէն աւուրս երիս: Եւ ապա, յառաջին անգամ ի յատեան իւրում յանդիման բազմութեան ժողովրդաց շքմեղս լինելով, ներկայութեան առաջակայիցն իւրոց՝ սակս անցեալ փորձանաւոր պատահմանն, եւ ի մէջ այլոց բանից ցնձացաւ անձն իւր. եւ զգալի սէրն, որ ունէր առ Ռզա-Ղուլի Միրզա, տակաւին շէս էր սառնացեալ, որպէս թէ սքանչելի իմն եղեւ զայս, զի սակս անցեալ գործոցն արարեցելոց ինքնին բարբառեցեալ՝ ասելով.

«Այս զինչ իցէ լինիլ հայր, եւ ընդ[դ]էմ սմին որպիսի որդիութիւն՝ Ամենաբարձրեալն այսպէս կամեցաւ»:

Եւ յետ այսր ամենայնի ծածկաբար ժողովեալն Ռզա-Ղուլի Միրզին ի ժամանակի կառավարութեան իւրում դրամսն երկու հարիւր հարկար թուման համարեցաւ ի գանձարանն արքունի: Եւ զվերոյ յիշեալ երկու զօրապետսն (64ա) ի պահպանութենէ պահնորդաց որպէս զանմեղս արձակեցեալք եղեն, եւ ըստ առաջնոյ գործառն[ի]ութիւնս իւրեանց ողորմամբար կարգաւորեցեալք եղեն:

ՎԵՐՁ



76 Ըստ Ս. Քիշմիշեւի աշխատութեամբ դատարկուած իրականացումից առաջ Ռզա-Ղուլի Միրզան դաճիճներին ասում է. «Յայտնէ՛ք շահին, որ նա կուրացնում է ոչ թէ ինձ, այլ ամբողջ Իրանը» (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 215):

ՀԱՄԻԴԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

(Ի դ. երկրորդ կես - ԻԱ դ. սկիզբ)

Վարուժան Պողոսեան

Հայոց ցեղասպանութեան պատմութիւնն իրադարձութեան սանձազերծումից մինչ այսօր գտնուել է Ֆրանսիացի պատմաբանների տարբեր սերունդների ուշադրութեան կենտրոնում: Դեռեւս XIX դարի վերջին եւ XX դարի սկզբին Ֆրանսիացի տարբեր հեղինակներ, այդ թւում՝ նշանաւոր պատմաբաններ, մեծ աւանդ են ներդրել Հայոց ցեղասպանութեան պատմութեան գիտական ուսումնասիրութեան ասպարէզում: 1920-ական թուականներից ի վեր, սակայն, Քրավիճակը Ֆրանսիայում, ինչպէս նաեւ միջազգային թատերաբեմում, կրել է զգալի փոփոխութիւններ՝ կապուած միջազգային յարաբերութիւններում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերի հետ: Հարցի էութիւնն այն է, որ 1923 թ. Թուրքական Հանրապետութեան հռչակումից ի վեր Թուրքիայում պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց ցեղասպանութեան փաստը շրջանցուել է լուրթեամբ: Այդ իսկ պատճառով արեւմտեան կապիտալիստական մեծ տերութիւնները, այդ թւում՝ Ֆրանսիան, ելնելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռուածութիւն են հանդէս բերել Թուրքիային՝ խորհրդային Միութեանը հակադրելու հարցում եւ, հետեւաբար, հանրապետական կառավարող շրջաններին հաճախելու նպատակով մոռացութեան են ճոյանալու նպատակով մոռացութեան են ճոյանալու Հայոց ցեղասպանութիւնը¹: Այս մատնել Հայոց ցեղասպանութիւնը թեմայի նկատմամբ հետաքրքրութիւնը

Ֆրանսիայում վերստին աճել է միայն 1960-ական թուականների կէսերից՝ կապուած Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցի հետ:

Այդ ժամանակաշրջանից առ այսօր Ֆրանսիացի պատմաբանների ջանքերով ստեղծուել է Հայոց ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած հարուստ պատմագիտական գրականութիւն, որը վկայում է Ֆրանսիայում այս թեմայի նկատմամբ դրսեւորուող անթաքոյց հետաքրքրութեան մասին: Դա պայմանաւորուած է ոչ միայն Ֆրանսահայ պատմաբանների գործունէութեամբ, այլեւ Ֆրանսիական կառավարութեան՝ Հայ ժողովրդի պատմական անցեալի հանդէպ գրաւած անաչառ վերաբերմունքով, ինչի արդիւնքում 2001 թ. Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչեց Հայոց ցեղասպանութեան փաստը:

Միաժամանակ հարկ է մոռացութեան չմատնել նաեւ այն իրողութիւնը, որ Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը նենգափոխող եւ դրա փաստն իսկ անթաքոյց ժխտող պատմագիտական ուղղութիւնը սկզբնաւորուել է Ֆրանսիայում դեռեւս 1890-ական թուականների կէսերին: Խօսքը վերաբերում է Աբդուլ Համիդ Բ-ի պատուէրով հանդէս եկած փոքրաթիւ հեղինակներին (Պ. Բ. Ալլոշ, Ռ. դէ Կուրսոն, Պ. Աբդոն Բուասոն, Լ. Ռուսո եւ այլք), որոնք Գ. Հանրապետութեան թրջամէտ քաղաքականութեան պայմաններում դարձել են Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան

1 N. Margossian, L'avant et l'après du génocide des Arméniens, - «Գիտութեան գլոբուս», 2005, հտ. 5, էջ 44-45: